ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ
N46-Ն

«26» դեկտեմբերի 2016թվականի. գյուղ Սառնաղբյուր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 36-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի<<բ>>ենթակետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սառնաղբյուրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սառնաղբյուրի համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2.ՈՒԺը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 36- Ն որոշումը << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքի 2015-2018 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին >>:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ասատրյան Զոհրաբ՝կողմ ----------

Գևորգյան Զոհրաբ՝ կողմ ----------

Դավթյան Եղիկ՝կողմ ----------

Խաչատրյան Արմեն՝ կողմ ----------

Մադաթյան Ստեփան՝ կողմ ----------

Մելքոնյան Սևադա՝ կողմ ----------

Նաջարյան Արմենակ՝ կողմ ----------

Ներսիսյան Գուրգեն՝ կողմ ----------

Սառնաղբյուր համայնքի ղեկավար՝ **Ս.Մադաթյան**

26 դեկտեմբերի 2016թվական

գ.Սառնաղբյուր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Սառնաղբյուր համայնքի ավագանու 2016թվականի
դեկտեմբերի 26 -ի թիվ 46 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ
Ծ Ր Ա Գ Ի Ր

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԵՎԱԿ ՄԱԴԱԹՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ -Ի ԹԻՎ -Ն ՈՐՈՇՄԱՄԲ:

Գ . ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ - 2016Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ
1.3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
1.4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
1.6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
1.7. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
1.8. ԽՄԵԼՈՒ և ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ
1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ և ԿԱՊ
1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1.11.ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ
1.12.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
1.13. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
1.14.ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
1.15.ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ
1.16.ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
1.17.ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1.18.ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1.Համայնքի ռազմավարությունն է.
2.2.Հիմնական նպատակները
2.3. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

3.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
3.2.ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
3.3. ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՇԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
3.4.ՀՆԳԱՄՅԱ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

5. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵԱԿԵՐՊՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի համաձայն ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի հանաձայն՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության կողմից մշակված և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2014 թվականին հավանության արժանացած «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

Ներկայացվող ՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ: Այն նախատեսում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և բյուջետավորման նպատակային գործընթացի իրականացումը: Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների /բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային/ հաշվառման արդյունքում:

Այն համայնքի զարգացմանն ուղղված ուղեցույց փաստաթուղթ է, որը կարող է հաշվի առնվել ՀՀ Շիրակի մարզի զարգացման, ինչպես նաև ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության, բարձր լեռնային համայնքների զարգացման ու աղքատության կրճատմանն ուղղված ռազմավարական ծրագրերում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են համայնքի ուժեղ և թույլ կողմերը, դասակարգվել են առաջնային և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները, վերլուծվել և գնահատվել են համայնքի ֆինասական, աշխատանքային, նյութատեխնիկական

ռեսուրսներն ու տնտեսական հնարավորությունները: Առաջադրվել են ծրագրային աշխատանքներ, որոնցում տրվել են առկա հիմնախնդիրների նկարագրությունները, լուծման ուղիները, պահանջվող ֆինանսական միջոցները, ֆինանսավորման աղբյուրները, ակնկալվող արդյունքները, ինչպես նաև կատարման ժամկետներն ու պատասխանատուները: Կատարվել են իրավիճակի վերլուծություններ և կանխատեսումներ, ներկայացվել են համայնքի ներկա իրավիճակը բնութագրող վիճակագրական տեղեկություններ:

Ծրագրում ներառված խնդիրները և դրանց առաջնահերթությունները չեն հավակնում լինել վերջնական և ծրագրերի իրականացման ընթացքում կախված արտաքին ու ներքին գործոնների ազդեցությունից կարող են ենթարկվել փոփոխությունների ու լրացումների:

1. <u>ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ,ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ</u>

1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թուրքական դարավոր բռնատիրությունից ազատագրվելու համար 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին բնակավայրի նախնիները Արևմտյան Հայաստանից զանգվածաբար գաղթել են Արևելյան Հայաստան: Դա մի տեղաշարժ է եղել անկախությունը կորցրած հարազատ հայրենիքի մի վայրից մյուսը:

1829 թվականի սեպտեմբերի 2-ի Ադրիանապոլիսի հաշտության պայմանագրով Արևելյան Հայաստանը միանալով Ռուսաստանին՝ կարողացավ ապահովել իր խաղաղ գոյակցությունը:

Ըստ տոհմագրական տվյալների՝ Սառնաղբյուր գյուղը հիմնադրել է 1828-1830 թվականներին Արևմտյան Հայաստանի Մուշի, Ալաշկերտի, Խնուսից, Կարսի, Վանի և Բասենի գավառներից գաղթած ընտանիքների կողմից: Սկզբնական շրջանում գյուղում բնակություն են հաստատել շուջ 300 գաղթական ընտանիքներ;

Թուրքերը իրենց տիրապետության սահմաններում թուրքացրել են տեղանունները՝ անկախ բնակավայրի էթնիկական կազմից: Սառնաղբյուրը մինչև 19-րդ դարը անվանվել է Սոգյութլի:

Հայկական լեռնաշխարի այս գեղատեսիլ վայրը քրիստոնյա հայը սրբացրել է իր եկեղեցիներով, մատուռներով ու խաչքարերով: Գյուղի կենտրոնում կանգուն է սրբատաշ կարմիր տուֆ քարով կառուցված Ս. Թադևոս Առաքելական եկեղեցին: Այն կառուցվել 1883 թվականին և ներկայումս գործում է:

Պատմահնագիտական մեծ արժեքներ է ներկայացնում 5-6-րդ դարերում կառուցված Սուրբ Հակոբ եկեղեցին, Հոգեվանքի համալիրը և Գրիգոր Լուսավորչի ուղտատեղին: Վերջինս

բնական մեծ քարայր է՝ խաչաքանդակներով, հորդառատ ու սառնորակ բնական աղբյուրներով:

Ըստ հայտնաբերված հնագիտական հուշարձանների տեղագրության՝ տեղանքը բնակեցված է եղել դեռևս վաղ բրոնզե դարում: Գյուղի շրջակայքում պահպանվել են բազալտից ու տուֆից մենաքարեր, բնակատեղիներ, գերեզմանոցներ:

1918-1920-ական թվականների թուրք հրոսակների արշավանքների հետևանքով Արևելյան Հայաստանի գյուղերի ու քաղաքների մեծ մասը կողոպտվել ու ավերվել են: 1918 թվականին նշված հրոսակախմբերը մեծ ոճրագործություններ են իրականացրել Կարսում, Շիրակում, Լոռի-Փամբակում և Հայաստանի այլ շրջաններում:

Այդ ողբերգական, արյունալի էջերից անմասն չի մնացել նաև Սառնաղբյուր գյուղը: Գյուղը մեծ սիրով ապաստան է տվել թուրքական յաթաղանից փրկված ավելի քան 200 արևմտահայ գաղթական ընտանիքների:

Սառնաղբյուրի /Սոգյութլուի/ հերոսական ինքնապաշտպանության մութ էջերի բացահայտմանն է նվիրվել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, պատմության ինստիտուտի, Ռուս-Հայկական /Սլավոնական/ պետական համալսարանի և «Շիրակ միջազգային միություն» հասարակական կազմակերպության կողմից Սառնաղբյուր գյուղում 2003 թվականի հունիսի 13-ին անցկացված գիտաժողովը, որի նյութերը հրապարակվել են «1918 թվականի մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ» ժողովածուում:

1887 թվականից Սառնաղբյուրը գտնվել է Ալեքսանդրապոլի գավառի կազմում: 1921 թվականին բնակավայրում հաստատվել են Խորհրդային կարգեր և մինչև 1996 թվականը ընդգրկված է եղել Անիի շրջանի կազմում: 1996 թվականին Հայաստանի Հանրապետության վարչատարածքային վերջին բաժանումից հետո Սառնաղբյուրը, որպես վարչական առանձին միավոր՝ ինքնուրույն համայնք, ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի կազմում:

ԲՆակավայրի հիմնադրումից ի վեր բնակչության հիմնական զբաղմունքը եղել և մնում անասնապահությունը, հացահատիկային և կերային կուլտուրաների մշակությունը: Առանձին տնտեսություններ զբաղվում են թռչնաբուծությամբ, մեղվապահությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ (կաղամբ, կարտոֆիլ, գազար և այլն):

Գյուղի հողային ֆոնդի գերակշռող մասը լեռնատափաստանային սևահողեր են, որոց ոռոգման և պարարտացման դեպքում կարող է ապահովվել կայուն և բարձր բերքատվություն:

Գյուղի հարևանությամբ է գտնվում Սառնաղբյուրի արհեստական ջրամբարը, որը կառուցվել է 1972 թվականին և ունի 5.0 մլն. խ. մ. տարողություն: Ջրամբարը սնվում է Չլկան գետակի,

ձնհալի և անձրևային ջրային պաշարներից: Ջրամբարից ոռոգվում են 883 հա վարելահողեր, սակայն ցանցի քայքայվածության պատճառով ջուրը նպատակին չի ծառայում:

Բնակավայրն իր զարգացումն հիմնականում ապրել է 1930-ական թվականներից հետո: Գյուղում կառուցվել է միջնակարգ դպրոց, ակումբ, մանկապարտեզ, գրադարան, հիվանդանոց,կենցաղի տուն, փոստի բաժանմունք, առևտրի և սպասարկման տարբեր օբյեկտներ: Կայուն տնտեսական աճ է ունեցել Սառնաղբյուրի սկզբնական շրջանում կոլեկտիվ, ապա խորհրդային տնտեսությունը: Այն աչքի է ընկել մսի և կաթի արտադրության բարձր ցուցանիշներով:

Մինչև 1991 թվականը գյուղում գործել է կարի ֆաբրիկա, որտեղ աշխատում են 100-120 մարդ (հիմնականում կանայք): Տղամարդ աշխատունակ բնակչության մի զգալի մասն էլ զբաղվել է քարի արտադրությամբ:

Սակայն գյուղատնտեսական և արդյունաբերական նշված ձեռնարկությունները ներկայումս չեն գործում և համայնքի աշխատունակ բնակչության հիմնական մասը զբաղված են արտագնա աշխատանքով: Վերջին 20 տարիների ընթացքում համայնքից գաղթել են մոտ 65 ընտանիքներ:

Համայնքը բոլոր ժամանակներում մեծ կարևորություն է տվել սերունդների կրթության և դաստիարակության հարցերին: Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցը իր բարձր առաջադիմությամբ և լավ ավանդույթներով մեծ ճանաչում ունի հանրապետությունում: Յուրանքանչյուր տարի, դպրոցի երկու տասնյակից ավելի շրջանավարտներ տեղ են զբաղեցնում հանրապետության հեղինակավոր բարձրագույն պետական ուսումնական հաստատություններում:

Համայնքը գիտության, մշակույթի և արվեստի ոլորտներում տվել է երեք տասնյակից ավել նշանավոր մարդիկ: Սառաղբյուրցիներ են ակադեմիկոսներ՝ Գուգեն Սահակյանը և Վահան Համազասպյանը, Սառնաղբյուրում է ծնվել բանաստեղծ Արշալույս Սարոյանը:

Սառնաղբյուրը ակտիվ մասնակցություն է ունեցել նաև Հայրենական Մեծ պատերազմին և Արցախյան ազատամարտին:

1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ

Սառնաղբյուրի գյուղը գտնվում Արագած լեռան արևմտյան ստորոտում, Շիրակի դաշտի հարավ-արևմտյան մասում և տեղաբաշխված է Չլկան գետակի ձորում:

Հյուսիսից սահմանակից է ՀՀ Շիրակի մարզի Ջորակապի, հարավից ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի, արևմուտքից՝ ՀՀ Շիրակի մարզի Լանջիկի համայնքների վարչական տարածքներին, իսկ արևելյան կողմում Արագած լեռան ստորոտներին:

Բնակավայն ունի գեղատեսիլ դիրք: Շրջապատված է սարերով, իսկ առանձին տեղամասերում անտառային շերտերով: Բնակավայրի հարևանությամբ է գտնվում Սառնաղբյուրի ջրամբարը: Խմելու ջուրը մաքուր է ու սառնորակ է:

Տարածքը ծովի մակերևույթից գտնվում է 1920 մ. բարձրության վրա և ընդգրկված է հանրապետության լեռնային բնակավայրերի ցանկում:

Բնակավայրին առանձնահատուկ են ցուրտ, ձյունառատ ձմեռները և զով ամառային եղանակները: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 10 - 12 աստիճան: Տարեկան միջին տեղումները կազմում են 350-500մմ, որոնք առանձնահատուկ են ապրիլ-հունիս և հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Բնակավայրի վարչատարածքը մշտապես վտանգված է կարկտահարությամբ, ուժեղ քամիներով ու տևական երաշտով: Տարածքը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում: Հիշարժան են 1926 և 1988թթ. աղետալի երկրաշարժերը:

Համայնքի վարչական տարածքը զբաղեցնում է 6491.31 հա., որից 5663.64 հա գյուղատնտեսական նշանակության հողերն են, հանքավայրերի հողերը կազմում են 53.63 հա, արդյունաբերական, արտադրական նշանակության հողերը՝ 62.78 հա, պատմամշակութային և հանգստավայրերի հողերը՝ 64.12 հա, անտառային ու ջրային ֆոնդի հողերը՝ 260.14 հա, իսկ մնացածը՝ ճանապարհների, կոմունալ ենթակառուցվածքների, ընդհանուր օգտագործման և այլ նշանակության հողերն են:

Համայնքի կառուցապատված տարածքը զբաղեցնում է 298.88 հա.:

Բնակավայրը նախկին շրջկենտրոնից գտնվում է 10 կմ., մարզկենտրոնից՝ 37 կմ. և մայրաքաղաքից՝ 95 կմ. հեռավորության վրա: Բնակավայրից 5կմ հեռավորությամբ է անցնում Գյումրի-Երևան միջպետական նշանակության ճանապարհը: Բնակավայրը երկաթուղային կայարանից գտնվում է 8 կմ հեռավորության վրա:

Տարածքում գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը: Հարուստ է տուֆ քարով, բազալտով, շինարարական ավազով ու կավով:

1.3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ըստ տոհմագրական տվյալների՝ Սառնաղբյուր գյուղը հիմնադրել է 1828-1830 թվականներին Արևմտյան Հայաստանի Մուշի, Ալաշկերտի, Կարսի, Վանի և Բասենի

գավառներից գաղթած ընտանիքների կողմից: Հետագայում գյուղը համալրվել է 1915 թվականի եղեռնից փրկված գաղթական ընտանիքներով: Բնակավայրը հիմնականում զարգացում է ապրել Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատումից հետ: Մինչև Հայրենական Մեծ պատերազմը գյուղն ունեցել է 600 տնտեսություն՝ շուրջ 3000 բնակչությամբ:

Հայրենական Մեծ պատերազմից հետո գյուղի բնակչության թիվը կտրուկ նվազել է: Հետպատերազմյան ժամանակաընթացում համայնքը առավելագույն՝ շուրջ 3500 բնակչություն է ունեցել 1980-1985 թվականներին:

Վերջին 20 տարիներին համայնքի բնակչության թիվը նվազել է շուրջ 300 մարդով, նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների թիվը նվազել է կրկնակի չափով և արձանագրվել է բնակչության կազմի ծերացում: Ներկայումս համայնքի աշխատունակ բնակչության 15-20 տոկոսը մեկնում են սեզոնային արտագնա աշխատանքի, շարունակվում է հատկապես երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

Համայնքի բնակչության կազմն՝ ըստ 01.01. 2016թ. հաշվառման / մարդ /.

- Ընդամենը՝ մշտական բնակչություն – 3427
  Այդ թվում՝ տղամարդ –1827, Կին՝ –1600
- Տնային տնտեսությունների թվաքանակը՝ մշտական-1025, առկա
- Առկա բնակչություն - 3437
- Առկա տնային տնտեսությունների թվաքանակը - 1011
- Նախադպրոցական տարիքի երեխաներ / 0 – 5 տարեկան / – 363
- Դպրոցական տարիքի երեխաներ / 6 – 15տարեկան / – 474
- Դպրոցական բարձր տարիքի երեխաներ /16 – 18 տարեկան/ – 142
- Հասուն տարիքի բնակչություն / 19-64 / – 2230
- Տարեց բնակչություն / 65 և ավելի / – 198
- Ընտրողների թիվը – 2550
- Կենսաթոշակառուների թիվը –208
- Հաշմանդամներ – 242
  այդ թվում՝
- Մանկուց հաշմանդամներ – 5
- Ազատամարտիկներ – 18
- Փախստականներ – 0

- Նպաստառու ընտանիքներ – 218
- 0-16 տարեկան 3 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներ – 98
- Միայն ծերերից կազմված ընտանիքներ - 50
- Աշխատունակ բնակչություն – 2570
- Զբաղբածների թիվը - 1652
- Այլազգիներ – 3
- Գործազուրկների թիվը – 918
- Միջին տարեկան ծնունդը՝ 60
- միջին մահացությունը՝ 21
- Ամուսնությունը՝ 40
-

Համայնքի բնակչության բաշխումն ըստ զբաղվածության հիմնական ճյուղերի /մարդ /

- Գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 1282
- Վարձու աշխատանք գ/տ ոլորտում – 60
- Վարձու աշխատանք ոչ գ/տ ոլորտում,մասնավոր –39
- Վարձու աշխատանք ոչ գ/տ ոլորտում,պետական – 96
- Ոչ գ/տ ինքնազբաղվածություն – 18
- Ուսանողներ - 83
- Բանակում ծառայողներ – 74

Համայնքում զբաղվածների բաշխվածությունն ըստ ոլորտների

- Արդյունաբերություն /այդ թվում գյուղատնտեսական հումք վերամշակող/ - 3
- Գյուղատնտեսություն – 1282
- Ծառայություններ – 50
  այդ թվում՝ առևտուր - 10
  գյուղատնտեսական ծառայություններ – 46
- Շինարարություն – 28
- Այլ ոլորտներ – 236
- Արտագնա աշխատանքի մեկնողների թիվ – 740

Համայնքի հասուն տարիքի բնակչության բաշխումն ըստ կրթամակարդակի

- Տարրական – 2
- Հիմնական – 510
- Միջնակարգ - 1033
- Միջնակարգ մասնագիտական – 615
- Բարձրագույն - 415

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղվածների թիվը

- Պետական մարմիններում – 86
- Տեղական ինքնակառավարման մարմիններում – 11

1.4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ժողովրդի իշխանությունն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավագանի /ավագանու 9 անդամ / և համայնքի ղեկավար: Համայնքի ավագանին իր լիազորություններն ստանձնել է 2016թ. նոյեմբերի 18-ին:

2014թ. հունիսի 8-ին Սառնաղբյուր համայնքում կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքներով, առաջադրված երկու թեկնածուներից համայնքի ղեկավար է վերընտրվել Սևակ Մադաթյանը, ծնված 1980թ., ունի բարձրագույն կրթություն:Մինչև համայնքի ղեկավար ընտրվելը նա աշխատել է Սառնաղբյուրի համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ, ապա համայնքի ղեկավարի տեղակալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ

N	Անունը, ազգանունը	Ծննդ.թիվը	Սեռը	Կրթություն	Կուս. ժատկան.	Լիազորություն-ների ստանձնման ժամկետը	Որերորդ անգամն է ընտրվել
1.	Զոհրաբ Ասատրյան	1958թ.	ար.	միջնակարգ	Անկ.	18.11.2016թ.	1
2.	Զոհրաբ	1980	ար.	հիմն.	Անկ.	18.11.2016թ.	1

	Գևորգյան			հանրակրթ.			
3.	Եղիկ Դավթյան	1984	ար.	բարձրագույն	Անկ.	18.11.2016թ.	1
4.	Արմեն Խաչատրյան	1975	ար.	բարձրագույն	ՀՀԿ	18.11.2016թ.	1
5.	Ստեփան Մաղաթյան	1963	ար.	բարձրագույն	Անկ.	18.11.2016թ.	1
6.	Սևադա Մելքոնյան	1988	ար.	միջնակարգ	ՀՀԿ	18.11.2016թ.	1
7.	Արմենակ Նաջարյան	1968թ.	ար.	միջնակարգ	ՀՅԴ	18.11.2016թ.	4
8.	Գուրգեն Ներսիսյան	1973թ.	ար.	բարձրագույն	Անկ.	18.11.2016թ.	5
9.	Գևորգ Շաբոյան	1991	ար.	բարձրագույն	Անկ.	18.11.2016թ.	1

«Տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքների և իրավական այլ ակտերի համաձայն համայնքի ղեկավարի կողմից ձևավորվել է աշխատակազմ՝ հետևյալ կազմով.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/հ	Պաշտոնի դասակարգ-ումը, անվանումը	Անունը, ազգանունը	Ծննդյան թիվը	Կրթությունը	Հաստիքային միավորը	
Քաղաքական պաշտոն						
1.	Համայնքի ղեկավար	Սևակ Մաղաթյան	1980թ,	բարձրագույն	1	
Հայեցողական պաշտոն						
1.	Համայնքի ղեկավարի տեղակալ	Գևորգ Աճեմյան	1983թ.	բարձրագույն	1	
Համայնքային ծառայության պաշտոններ						
1.	Աշխատակազմի քարտուղար	Մանյա Մովսիսյան	1967թ.	բարձրագույն	1	

2.	Գլխավոր մասնագետ-հաշվապահ	Դերենիկ Վարդանյան	1953թ,	բարձրագույն	1	
3.	Գլխավոր մասնագետ	թափուր	-	-	1	
4.	Գլխավոր Մասնագետ	Թափուր	-	-	1	
5.	Առաջին կարգի մասնագետ	Գոհարիկ Կարապետյան	1965թ.	միջնակարգ մասնագիտ.	1	
Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ						
1	Գրադարանա-վար	Հասմիկ Ասլանյան	1965թ.	միջնակարգ մասնագիտ..	1	
2	Պահակ	Քնարիկ Մարգարյան	1951թ.	միջ.	1	
3	Հավաքարար	Սուսաննա Սողոմոնյան	1963թ.	միջնակարգ մասնագիտ.	1	
4	Գերեզմանոցի պահակ	Գագիկ Յարջոյան	1964թ.	միջնակարգ	1	
5.	Վարորդ	Գուրգեն Մարգարյան	1979թ.	միջնակարգ	1	
Համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակը՝ 11 միավոր						

Սառնաղբյուրի նախադպրոցական ուսումնական հաստատությունում /ՀՈԱԿ/ գործում է 4 խումբ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Հաստիքների քանակը	*սահմանված դրույքաչափը*
1.	Տնօրեն	1	1	
2.	ավագ դաստիարակ	1	1	1
3.	Դաստիարակ	1	4	1.12
4.	Դայակ	1	4	1
5.	Խոհարար	1	1	1
6.	Գործավար	1	1	1
7.	դաշնակահար	1	1	1
8.	բուժքույր	1	1	1
9.	հաշվապահ	1	1	1

Գծապատկեր 1. Սառնաղբյուր համայնքապետարանի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը



1.5.ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 1997 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին» թիվ 51 որոշմամբ:

Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի:

Քայքայված և անմխիթար վիճակում են ոռոգման ներքին ցանցերը: Ցանցերի քայքայվածության պատճառով մատակարարվող խմելու և ոռոգման ջրի 50 տոկոսը մատնվում են կորուստների: Վերանորոգման կարիք ունեն ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհները, մանկապարտեզի շենքի տանքը, փողոցային լուսավորության ներքին ցանցը, մարզադաշտը: Նորացման կարիք ունեն մանկապարտեզի և գրադարանի գույքը:

«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» և «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության» ծրագրերի շրջանակներում 2007-2009թթ. գազիֆիկացվել է բնակավայրի 40 տոկոսը: 2007 թվականին ասֆալտապատվել է Գյումրի-Երևան մայրուղի բնակավայր մտնող միջհամայնքային ճանապարը և գյուղ մտնող կենտրոնական փողոցի մի հատվածը: Պետական բյուջեի միջոցներով 2009 թվականին սկսվել և ներկայումս ընթացքի մեջ է մշակույթի տան շենքի հիմնանորոգման աշխատանքները:

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի ցանկը ներկայացված ի հավելված 1-ում:

1.6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնակավայրը չունի կեղտաջրերի և արտաքին ջրերի հեռացման համակարգեր: Հեղեղատարի բացակայության պատճառով բնակավայրի առանձին թաղամասեր գարնան ձնհալի և հորդառատ անձրևների ժամանակ վտանգված են հեղեղումների:

Կեղտաջրերի հեռացումը կատարվում է անհատական խորքային հորերի միջոցով: Բնակավայրում աղբահանությունը կատարվում է համայնքի բնակիչների կողմից անհատական կարգով կամ գյուղապետարանի կողմից կազմակերպվող սանիտարական մաքրման օրերի միջոցով: Բնակավայրը նպատակային նշանակության աղբավայր չունի:

ԲՆակավայրը կանաչապատ է, ունի 169 հա անտառային ծածկույթ: Առաջնային անհրաժեշտություն է անտառաշերտի պահպանության և ծառատունկ տարածքների ընդլայնման խնդիրները: Կարևոր են նաև Սառնաղբյուրի ջրամբարի պահպանության, շրջակայքի սանիտարական մաքրության ապահովման և հեղեղատարների մաքրման խնդիրներները:

Բնակավայրը չունի համայնքային նշանակության կառուցապատ հանգստի գոտի: Հատկապես ամռան ժամանակաշրջանում բարձր է օդի աղտոտվածությունը:

Բնակավայում վտանգավոր արտանետումներ չկան:

1.7.ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում առկա է համայնքի բնակիչների սեփականությունը հանդիսացող 855 անհատական առանձնատուն՝ 126700 ք.մ ընդհանուր մակերեսով և բազմաբնակարան 2 շենք /8 բնակարան/՝ 860 ք.մ. ընդհանուր մակերեսով:

Բնակավայրը գտնվում է 1988թ. «Սպիտակի» աղետալի երկրաշարժի գոտում և համայնքի բնակֆոնդի մոտ 30%-ը ստացել 2-4 աստիճանի վնասվածություն: Երկրաշարժի հետևանքով անօթևանի կարգավիճակ ունեն համայնքի 12 ընտանիք, որոնք շուրջ 23 տարի է ինչ բնակվում են վագոն-տնակներում և հարմարեցված կացարաններում: Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեն համայնքի շուրջ 200 երիտասարդ ընտանիքներ:

Համայնքում կա 40 բնակելի առանձնատների անավարտ շինարարություն, որոնց շինարարությունը սկսվել է երկրաշարժից հետո և անհրաժեշտ միջոցների բացակայությամբ պայմանավորված մինչև օրս չեն անավարտվել:

Համայնքի բնակարանային տնտեսությունը

Հ/հ	Բնակարանային տնտեսության բնութագրիչներ	Շենքերի քանակը / հատ /	Բնակա-ռանների /բն.տների/ քանակը / հատ /	Ընդհանուր բնակմակերեսը / քառ.մ. /
1	*Սեփականաշնորհված բազմաբնակարան բնակելի շենքեր*	2	8	860.0
	1 սենյականոց բնակարաններ	-	-	-
	2 սենյականոց բնակարաններ	2	8	860.0
	3 սենյականոց բնակարաններ	-	-	-
	4 և ավել սենյականոց բնակարաններ	-	-	-
2	**Կառուցման ժամկետները**	-		
	Մինչև 10տարի առաջ կառուցված	-	-	-
	11-20տարի առաջ կառուցված	-	-	-
	21-50տարի առաջ կառուցված	2	8	860.0
	50 և ավելի տարի առաջ կառուցված	-	-	-
1	*Անհատական առանձնատներ*	x	860	126820.0
	Կառուցման ժամկետները			
	Մինչև 10տարի առաջ կառուցված	x	32	5000.0
	11-20տարի առաջ կառուցված /վերակառուցված/	x	68	11560.0
	21-50տարի առաջ կառուցված	x	478	76480.0
	50 և ավելի տարի առաջ կառուցված	x	282	34280.0
	Ընդհանուր միջին մակերեսը	x	x	148.8
	ԸՆԴԱՄԵՆԸ ԲՆԱԿՖՈՆԴ	2	868	128180.0

1.8. ԽՄԵԼՈՒ և ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ

Համայնքի խմելու ջուրը մատակարարվում է Արագած լեռան ստորոտի բնական աղբյուրներից ինքնահոս եղանակով և թողարկման հզորությունը կազմում է 10 լիտր/վրկ: Բնակչության խմելու ջրով ապահովվածության մակարդակը կազմում է 30 տոկոս:

Բնակավայրի խմելու ջրի մատակարարումն իրականացվում է 12 կմ ընդհանուր երկարության խողովակաշարերի միջոցով:

Ջրամատակարարման ներտնտեսային ցանցի բացակայության պատճառով համայնքի բնակչության 80 տոկոսը խմելու ջրից օգտվում են թաղամասերում տեղադրված հանրային աղբյուրների միջոցով: Բնակավայրի ծայրամասային բնակելի տները և նորակառույց թաղամասերը ապահովված չեն խմելու ջրով:

Համայնքի ներկայիս շահագործվող ներտնտեսային ցանցը կառուցվել է 1950-1960թթ. և ցանցի առանձին հատվածների քայքայվածության պատճառով հաճախակի են ջրագծի վթարները, ջրի կորուստները և աղտոտումները:

Արագած լեռան ստորոտի բնական աղբյուրներն ունեն խմելու ջրի բավարար պաշարներ համայնքի բնակչության խմելու ջրի պահանջարկը ամբողջության բավարարելու համար:

Խմելու ջրի որակը, որը պարբերաբար ուսումնասիրվում է հակահամաճարակային ծառայության կողմից, բնութագրվում է բավարար և խմելու համար պիտանի:

Բնակավայրի խմելու ջրի լոկալ ցանցը սպասարկվում է համայնքապետարանի կողմից:

Բնակավայրին շուրջօրյա ջրամատակարարում ապահովելու համար համայնքում 2016թվականի հալիս ամսից իրականացվում են խմելու ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքներ:

Համայնքի ոռոգելի վարելահողերը կազմում են 80 հեկտար, որն իրականացվում է Սառնաղբյուրի ջրամբարից՝ մեխանիկական եղանակով: Համայնքի ոռոգման համակարգը կառուցվել է 1970-ական թվականներին և երբևէ հիմնական նորոգման չի ենթարկվել: Պոմպակայանի և ոռոգման ցանցի քայքայվածության պատճառով փաստացի ոռոգվում է 40 հա:

Համայնքի բնակչության տնամերձ հողամասերի ոռոգումն իրականացվում է բնական առվակների և բակերում տեղադրված խորքային հորերից մեխանիկական եղանակով հանվող արտեզյան ջրերով:

Բնակավայրում առկա են ոռոգման ջրի մեծ պաշարներ համայնքի ոռոգելի վարելահողերի ծավալներն ավելացնելու և բարձր բերքատվություն ապահովելու համար:

1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ և ԿԱՊ

Բնակավայրը Գյումրի-Երևան մայրուղուց գտնվում է 6 կմ, Մարալիկ քաղաքից՝ 10կմ, մարզկենտրոնից՝ 37 կմ, իսկ մայրաքաղաքից՝ 95 կմ հեռավորության վրա: Մոտակա երկաթուղին Մարալիկի երկաթուղային կայարանն է:

Բնակավայրում կա փոստային բաժանմունք, ունի «ԱՐՄԵՆՏԵԼ»-ի մալուխային և ալեհավաքային տեղական հեռախոսակապ, բնակչությունը օգտվում է նաև «ԱՐՄԵՆՏԵԼ», «ՎԻՎԱՍԵԼ ՄՏՍ» և «ՅՈՒՔՈՄ » բջջային հեռախոսակապերից:

Ասֆալտապատ է բնակավայրը Գյումրի-Երևան մայրուղուն կապող միջհամայնքային ճանապարհը:

Ներհամայնքային շուրջ 30 կմ. ընդհանուր երկարության ճանապարհները գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում:

Քայքայված վիճակում են նաև համայնքի դաշտամիջյան ճանապարհների առանձին տեղամասեր, որի հետևանքով լուրջ դժվարություններ են ստեղծվում գյուղտնտեսական աշխատանքների կատարման ընթացքում:

U Մարալիկ, Գյումրի և Արթիկ քաղաքների հետ տրանսպորտային կապը ապահովվում է միկրոավտոբուսի և ավտոբուսի 3-ական երթուղիների միջոցով: Մայրաքաղաքի հետ կապը ապահովվում է միկրոավտոբուսի 1 երթուղու միջոցով:

Անձնական սեփականության տրանսպորտային միջոցներովով ապահովված են համայնքի ընտանիքների շուրջ 50 տոկոսը:

1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքը համախմբված է: Բնակչությունը սերտ կապեր ունի մայրաքաղաքի, մարզկենտրոնի, նախկին շրջկենտրոնի և շրջակա բոլոր համայնքների հետ:

Համայնքը համագործակցում է հանրապետությունում գործող քաղաքական և հասարակական կազմակերպությունների, հանրապետական և միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ:

Համայնքը անդամակցում է «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը, համագործակցության կապեր ունի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ծրագրի, «Հայաստան համահայկական հիմնադրամի», «Սոցիալական ներդրումների հիմնադրամի», «Գյուղական բարեփոխումների աջակցության ծրագրի», «Կարմիր խաչի», ներդրումային այլ ծրագրերի ու հիմնադրամների հետ:

Համայնքում գործում է «համայնքի երիտասարդական միություն» հասարակական կազմակերպությունները:

Հոգևոր ոլորտում համայնքը համագործակցում է Շիրակի Առաջնորդարանի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:

1.11.ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 6491.31հա. է, որից `

1. Գյուղ. նշանակության հողեր – 5663.64 հա.

այդ թվում՝

- վարելահող - 1006.1հա., որից սեփականաշնորհված՝ 864.0 հա
- արոտ - 4242.17հա,

- գյուղատնտեսական նշանակության այլ հողեր - 406.78 հա,

2. Բնակելի շինությունների տակ հողեր – 298.88 հա,
3. Արդյունաբերական , արտադրական շինությունների տակ հողեր – 62.78հա,
4. Հանքավայրերի հողեր – 53.63 հա,
5. Ճանապարհների տակ հողեր - 8.13 հա
6. առողջապահական, հանգստավայրերի, մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր – 64.12 հա.
7. Անտառային և ջրային ֆոնդի հողեր – 260.14 հա.
8. Հասարակական կառուցապատման, ընդհանուր օգտագործման կոմունալ ենթակառուցվածքների հողեր – 33.57 հա.
9. Պետական սեփականության հողերը կազմում են – 2152.47հա

Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողատարածքները համայնքի գյուղացիական տնտեսությունների կողմից օգտագործվում են ամբողջությամբ:

1.12.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև 1990 թվականը համայնքում գործել են կարի արտադրության ձեռնարկությունը և Մարալիկի շինանյութերի ու իրերի կոմբինատի ուղիղ կտրվածքի քարի արտադրության 3 հանքերը:

2008 թվականին համայնքում հիմնադրվեց «Վահագն-Պարթև» ՍՊԸ-ն, որն զբաղվում էր զովացուցիչ ըմպելիքների արտադրությամբ: Տեղադրվեցին ժամանակակակից տեխնոլոգիայի հոսքային գծեր և ապահովվեց շուրջ 12 աշխատատեղ: Սակայն արտադրանքի իրացման հետ կապված դժվարությունների պատճառով այն 2010 թվականի կեսերին փակվեց և ներկայումս այն չի գործարկվում:

Համայնքում առկա է տուֆ քարի մեծ պաշարներ: Անհրաժեշտ ներդրումներ կատարելու դեպքում ուղիղ կտրվածքի տուֆ քարի արտադրությունը կարող է զարգանալ և կապահովվի զգալի թվով աշխատատեղեր:

Համայնքում կարող է զարգանալ նաև գյուղատնտեսական մթերքների վերամշակման ճյուղը /մսամթերքի արտադրություն, բանջարեղենի պահածոյացում և այլն/:

1.13.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղտնտեսության բնագավառի հիմնական ճյուղերը հացահատիկային մշակաբույսերի, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությունն ու անասնապահությունն է: Առանձին տնտեսություններ զբաղվում են նաև թռչհապահությամբ և մեղվապահությամբ:

Վարելահողերի, ինչպես նաև ոռոգելի հողատարածքների սակավության, առկա ոռոգման համակարգի քայքայվածության պատճառով համայնքում լուրջ դժվարություններ կան գյուղատնտեսական մթերքների արտադրության կազմակերպման, բարձր բերքատվության ապահովման գործում և անասնապահության ճյուղի զարգացման համար:

Խորհրդային տեսության լուծարումից և վարելահողերի սեփականաշնորհումից հետո, համայնքում կազմավորվել են շուրջ 1000 գյուղացիական տնտեսություններ, որոնց կողմից մշակվում է 1006.4 հա. վարելահող, որից 864.0 հա. հանդիսանում է համայնքի գյուղացիական տնտեսությունների սեփականությունը, իսկ համայնքի սեփականություն համարվող 124.5 հա վարելահողերը 52 տնտեսությունների կողմից օգտագործվում են վարձակալության իրավունքով: Սեփականաշնորհված վարելահողերի 1 հողաբաժինը կազմում է 0.65 հա: Մեկ տնտեսության կողմից միջին հաշվով մշակվում է մոտ մեկ հա վարելահող:

Դաշտավարության բնագավառում տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կերային մշակաբույսերի /կորնգան, առվույտ/, կարտոֆիլի, կաղամբի, գազարի և բանջարա-բոստանային այլ կուլտուրաների մշակությամբ: Տնամերձ հողամասերում առկա է շորրջ 10000 մրգատու ծառեր /խնձորենի, տանձենի, բալենի, սալորենի և այլն/: Ոռոգելի վարելահողերի սակավության և բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանների պատճառով գյուղատնտեսական մթերքների արտադրության արդյունավետությունը կախված է բնության քմահաճույքից: Ցանքատարածությունները մշտապես վտանգված են տևական երաշտով, ցրտահարությանմբ, կարկտահարությամբ և հեղեղումներով: Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը բնակլիմայական բարենպաստ պայմանների դեպքում կազմում է 20-30 ցենտներ, իսկ երաշտի, ցրտահարության կամ կարկտահարության դեպքում կորուստը կազմում է 50-100%:

Տարածաշրջանում համայնքը աչքի է ընկնում բարձր որակի կաղամբի և գազարի արտադրությամբ:

Գյուղացիական տնտեսությունների կողմից պահվում է 2651 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, այդ թվում կովեր՝ 1264գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 2731, խոզեր՝ 86 գլուխ, հավեր 3126, մեղվաընտանիք՝ 359:

Համայնքի բնակչության կողմից սպառվում է ստացված գյուղատնտեսական արտադրանքի մինչև 70 տոկոսը:

Գյուղում կա թրթուրավոր և անվավոր 17 տրակտոր, 2 կոմբայն, 2 խոտհնձիչ, 63 բեռնատար ավտոմեքենա, տասնյակ գյուղ մեխանիզմներ ու գործիքներ: Գյուղտնտեսական մեքենաներն ու մեխանիզմները բարոյապես ու ֆիզիկապես մաշված են, կա պահեստամասերի մեծ պահանջարկ:

Ոռոգման համակարգի վերականգնման, ցանցի ընդլայնման, հակակարկտային կայանքների տեղադրման, գյուղատնտեսական մեքենաների ու մեխանիզմների նորացման դեպքում համայնքի գյուղատնտեսության ոլորտը կարող է կտրուկ զարգանալ:

Անհրաժեշտ ներդրումների պայմաններում համայնքում կարող է զարգանալ նաև գյուղատնտեսական մթերքների վերամշակման ճյուղը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական հողատեսքերը

Հողատեսքի անվանումը	2016թվական	
	Քանակը /հա/	որից օգտագործվում է /հա/
Ընդամենը գյուղտնտեսական նշանակության հողեր, որից՝	5663.64	5663.64
Վարելահող	1006.1	1006.1
Բազմամյա տնկարկներ	-	-
Խոտհարքներ	8.59	8.59
Արոտավայրեր	4241.17	4241.17
Այլ գյուղատնտեսական հողեր	406.78	406.78

2. Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը

	Ցանքատարածությունների կառուցվածքը	2016թվական	
		Քանակը /հա/	%-ը վարելահողերի ընդհանուր քանակի նկատմամբ
1.	*Ընդամենը հացահատիկային մշակաբույսեր, այդ թվում՝*	800.0	**81.0**
	Ցորեն	460.0	46.6
	Գարի	340.0	34.4
	Այլ հացահատիկային մշակաբույսեր	0.0	0.0
2.	*Ընդամենը կերային մշակաբույսեր, այդ թվում՝*	82.0	8.3
	Կորնգան	75.0	7.6
	Առվույտ	7.0	0.7
3.	*Ընդամենը բանջարաբոստանային մշակաբույսեր, այդ թվում՝*	76.2	7.6
	Կարտոֆիլ	40.0	4.0
	Կաղամբ	30.0	3.0
	Գազար	3.0	0.3
	Բանջարաբոստանային այլ մշակաբույսեր	3.2	0.3
	Ընդամենը	958.2	96.7

3.Հիմնական մշակաբույսերի համախառն բերքը /բերքատվություն/

Մշակաբույսերի տեսակները	2016թվական
Հացահատիկային մշակաբույսեր	
Համախառն բերքը, տոննա	1440.0
1 հա -ի միջին բերքատվությունը,տոննա	1.8
Կարտոֆիլ	
Համախառն բերքը, տոննա	1200.0
1հա -ի միջին բերքատվությունը, տ/հա	

	30.0
Կաղամբ	
Համախառն բերքը, տոննա	750.0
1հա -ի միջին բերքատվությունը, տ/հա	25.0
Բանջարաբոստանային այլ մշակաբույսեր	
Համախառն բերքը, տոննա	22.4
1 հա -ի բերքատվությունը	7.0
Կերային մշակաբույսեր	
Համախառն բերքը, տոննա	246.0
1 հա -ի բերքատվությունը	3.0

4 Անասնագլխաքանակը

/ գլուխ/

Գյուղ. կենդանիների տեսակները	**01.01.2016թ.**
Խոշոր եղջերավոր անասուններ	2651
որից՝ կովեր	1264
Խոզեր	86
Ոչխարներ և այծեր	2731
Թռչուններ	3126
Մեղվաընտանիքներ	359

5.Անասնապահական մթերքների արտադրության ծավալները և անասունների մթերատվությունը

Անասնապահական մթերքի տեսակը	**2016թվական**
Մթերատվությունը	
Մեկ պայմանական գլուխ խոշորի մթերատվությունը, տոննա	120
1 կովի կաթնատվությունը, կգ	1500
1 ոչխարի բրդատվությունը,կգ	2.6
1հավի ձվատվությունը, հատ	150

1 մեղվաընտանիքի մթերատվությունը, կգ	12.0
Արտադրության ծավալները	
Մսի արտադրություն, տոննա	55.0
Կաթի արտադրություն, տոննա	1500
Բրդի արտադրություն, տոննա	5.7
Ձվի արտադրություն, հազ. հատ	632.2
Մեղրի արտադրություն, տոննա	2.8

6.Համայնքում առկա գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ

Գյուղ. մեքենայի, գործիքի անվանումը	Չափի միավոր	Քանակը
Թրթուրավոր տրակտոր	հատ	2
Անվավոր տրակտոր	հատ	15
Հացահատրկային կոմբայն	հատ	2
Խոտհնձիչ կոմբայն	հատ	2
Բեռնատար ավտոմեքենա	հատ	63
Տրակտորային կցասայլ	հատ	12
Գութան	հատ	5
Կուլտիվատոր	հատ	5
Շարքացան	հատ	6
Հակավորող մեքենա	հատ	4
Հատիկազտիչ մեքենա	հատ	1

1.14.ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի 700 աշակերտ/տեղով հանրակրթական մեկ դպրոց, որտեղ սովորում են 402 աշակերտ: Դպրոցն ունի 53 աշխատող, որից 32-ը մանկավարժներ: Մանկավարժներից 29-ը ունեն բարձրագույն, իսկ 3-ը միջնակարգ մասնագիտական կրթություն: Դպրոցի շենքը 2005-2006թթ. հիմնական նորոգման է ենթարկվել Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով: Դպրոցը հագեցված է անհրաժեշտ գույքով և կահավորանքով: Հանրակրթական դպրոցը տարածաշրջանում աչքի է ընկնում ուսման բարձր առաջադիմությամբ, իր բարի ավանդույթներով և կազմակերպված մանկավարժական կոլեկտիվով: Դպրոցի շրջանավարտների 80-90 տոկոսը ընդունվում են պետական տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Համայնքի միակ մշակութային օջախը համայնքային ենթակայության մշակույթի տունն է: Պետական բյուջեի ծրագրով ընթացքի մեջ է մշակույթի տան հիմնական նորոգման աշխատանքները, որն սկսվել է 2008 թվականին և նախատեսված է ավարտել 2014 թվականին: Մշակույթի տան նորոգմամբ կաշխուժանա համայնքի մշակութային կյանքը: Հանրապետությունում գործող ներդրումային ծրագրերի և համայնքի բյուջեի միջոցներից համապատասխան ներդրումներ կկատարվեն մշակույթի տան գույքի նորացման, մշակութային և գեղարվեստական խմբակների ստեղծման և համայնքային ենթակայության երաժշտական դպրոցի հիմնադրման համար:

Համայնքը սեփականության իրավունքով ունի 120 տեղանոց մանկապարտեզ, որտեղ հաճախում են շուրջ 100 երեխա: Համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկը 2011 թվականին վերակազմակերպվել է «Սառնաղբյուրի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության: Նախակրթարանն ունի 15 աշխատողներ, որոնցից 5-ը մանկավարժներ են: Նախակրթարանի 2 մասնաշենքները 2006 թվականին մասնակիորեն վերանորոգվել են ԱՄՆ դեսպանության «Միջազգային զարգացման գործակալության» «Փրկեք երեխաներին» կազմակերպության և հմայնքի բյուջեից կատարված ներդրումների միջոցներով: Վերանորոգման կարիք ունի նախակրթարանի 3-րդ մասնաշենքը և բոլոր երեք մասնաշենքների տանիքները:2016թվականին կառուցվեց նախադպրոցական ուսումնական հաստատության ջեռուցման համակարգը և այժմ ձմռան ժամանակաշրջանում նախակրթարանը հնարավորություն ունի շարունակելու իր գործունեությունը : Նորացման կարիք ունի նախակրթարանի գույքն ու հանդերձանքը:

Համայնքն ունի մարզադաշտ, որտեղ ստեղծվել են որոշակի հարմարություններ՝ համայնքի պատանիների ու երիտասարդների ֆիզիկական դաստիարակության և սպորտային խաղերի անցկացման համար:

Համայնքի բնակչության առողջապահական սպասարկումն իրականացվում է <<Սառնաղբյուրի առողջության կենտրոնի>> և «Մարալիկի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից: Բուժ ամբուլատորիան կառուցվել է 1990 թվականին Ավստրիայի Հանրապետության կողմից աղետի գոտում իրականացված ծրագրերի շրջանակներում: Բուժ. ամբուլատորիայում աշխատում են 2 բժիշկ, 3 բուժ. քույր և 1 սանիտար:

1.15.ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Սառնաղբյուր համայնքի ուժեղ կողմերն են՝

- Բերրի վարելահողերի առկայությունը.
- Բնակավայրի գազիֆիկացված լինելը.
- Տուֆ քարի մեծ պաշարների առկայությունը.
- Սառնաղբյուրի ջրամբարի առկայությունը.
- Գյումրի-Երևան մայրուղուն մոտ գտնվելը.
- Երկաթուղային կապին մոտ գտնվելը.
- Ինքնահոս խմելու ջրերի առկայությունը.
- Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կադրերի և բանվորական աշխատուժի առկայությունը.
- Արտագնա աշխատանքից ստացվող եկամուտը.
- Համայնքի բնակչության աշխատասիրությունը և համախմբվածությունը:
- Պատմամշակութային ու բնական հարուստ ժառանգության առկայությունն ու մշակութային հարուստ ավանդույթները

1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Սառնաղբյուր համայնքի թույլ կողմերն են՝

- Ոռոգելի վարելահողերի սակավությունը և պոմպակայանի շահագործման դժվարությունները.
  - Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները.
  - Հակակարկտային կայանքների բացակայությունը.
  - Համայնքի գյուղացիական տնտեսությունների թույլ զարգացվածությունը.
  - Գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածությունը.

- Որակյալ սերմերի և տոհմային ցեղատեսակների բացակայությունը, պարարտանյութերի, թունաքիմիկատների և բուժանյութերի ապահովման դժվարությունները, բարձր գները.
- 1988 թ. երկրաշարժի հետևանքով համայնքի բնակֆոնդին հասցված վնասները.
- Համայնքի բնակչության մոտ 70 տոկոսի սոցիալական անապահով վիճակը և ցածր կենսապայմանները.
- Անօթևանի կարգավիճակ ունեցող թվով 12ընտանիքների առկայությունը.
- Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող թվով 100 երիտասարդ ընտանիքների առկայությունը.
- Մշակույթի տան վերակառուցումը և անհրաժեշտ գույքի և կահավորանքի բացակայությունը.
- Մանկապարտեզի վերանորոգման և գույքի համալրման դժվարությունները..
- Կոյուղու համակարգի բացակայությունը.
- Հեղեղատարների բացակայությունը.
- Քարաթափման վտանգները.
- Ներհամայնքային ճանապարհների քայքայված և անբարեկարգ վիճակը.
- Բնակչության հանգստի և ազատ ժամանցի համար հանգստի գոտու բացակայությունը.
- Համայնքի բնակչության աշխատանքային թերբեռնվածությունը և գործազրկության բարձր մակարդակը.
- Երիտասարդ ընտանիքների արտահոսքը համայնքից

1.17.ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Տուֆ քարի մեծ պաշարների առկայությունը, քարի արտադրության զարգացումը և նոր աշխատատեղերի ստեղծումը.
- Արագած լեռան ստորոտների ջրային պաշարների բազայի վրա ինքնահոս եղանակով ոռոգման նոր համակարգի կառուցումը, գյուղատնտեսության ոլորտի զարգացումը.
- Երկարաժամկետ և մատչելի տոկոսադրույքներով գյուղատնտեսական նպատակային վարկերի միջոցով գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացումը, վերամշակման ճյուղի զարգացումը.

- Համայնքում առկ հիմնախնդիրների լուծման նպատակով հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների և ներդրումային հիմնադրամների հետ համագործակցության կապերի զարգացումը:
- Գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնման հնարավորությունը

1.18.ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Բարձր սեյսմիկ գոտում գտնվելու հանգամանքը.
- Ներհամայնքային ճանապարհների քայքայվածությունը.
- Կոյուղաջրերի հեռացման ցանցի բացակայությունը.
- Մշակույթի տան քայքայված և անմխիթար վիճակը.
- Տեղական բյուջեի սահմանափակ միջոցները և սեփական եկամուտների հավաքագրման դժվարությունները.
- Բնական աղետները /երաշտ, կարկտակարություն, ցրտահարություն, հեղեղավտանգ իրավիճակներ և այլն/ և բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները.
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը.

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Սառնաղբյուր համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, քանի որ այն կախված է հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման տեմպից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Սառնաղբյուր համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել բնական ռեսուրսների, հիմնականում հումքային, սպասարկման ոլորտի, գյուղատնտեսության հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով: Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետության և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի տեսլականն է.

Սառնաղբյուր համայնքում տնտեսական և սոցիալական ոլորտների բարեփոխումների ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, բարձրացնել բնակչության կենսամակարդակը:

2.1Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ **ռազմավարությունը՝**

1. Գյուղատնտեսության ճյուղի զարգացման, տուֆ քարի արտադրության ծավալների ընդլայնման, փոքր և միջին բիզնեսի զարգացման միջոցով ստեղծել նոր աշխատատեղեր, կանխել երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:
2. Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը
3. Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ
4. Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտրի և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը
5. Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը

2.2 Հիմնական նպատակները

Համայնքի զարգացման հիմնական նպատակներն են՝

- Պոմպակայանի հիմնանորոգում, ռոգման ցանցի ընդլայնում:
- Հակակարկտային 4 կայանքների տեղադրում;
- Գյուղացիական տնտեսությունների զարգացում, ֆերմերային և կոլեկտիվ տնտեսությունների հիմնում, գյուղատնտեսական տեխնիկայի նորացում, որակյալ սերմերի, բուժանյութերի, թունաքիմիկատների ապահովում.
- Եկրաշարժի հետևանքով անօթևանի կարգավիճակ ունեցող համայնքի թվով 12 ընտանիքների բնակարանի ապահովում:
- Բնակավայրի կոյուղացում:
- Մանկապարտեզի շենքի և տանիքների վերանորոգում:

- Մշակույթի տան գույքի և կահավորանքի ապահովման, մշակութային, գեղարվեստական և մարզական խմբակների բացման, երաժշտական դպրոցի հիմնադրման միջոցով համայնքի մշակութային կյանքի աշխուժացում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում:
- Ներհամանքային ճանապարհների վերանորոգում:
- Տուֆ քարի արտադրության ընդլայնում, նոր աշխատատեղերի ստեղծում:
- Համայնքում գործարար նախաձեռնությունների խթանում, գյուղ. մթերքների վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների հիմնում.
- Հիփոթեքային վարկերի միջոցով համայնքի երիտասարդ ընտանիքների համար անհատական բնակարանային շինարարության խթանում:
- Համայնքում առևտրի և սպասարկումների որակի բարելավում:
- Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն:
- Բնակավայի բարեկարգում, կանաչապատում, աղբահանության կազմակերպում, հանգստի գոտու հիմնում, փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում
- Ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգենիկ վիճակը, խուսափել հիվանդություններից և համաճարակներից

2.3. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Անցած տարիներին համայնքապետարանի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

Համայնքում ստեղծվել և գործում են քաղաքացիական պաշտպանության շտաբ, տարհանման հանձնաժողով և քաղաքացիական պաշտպանության թվով 5 կազմավորումներ: Համայնքում ստեղծվել և գործում է նաև արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովը:

Համայնքում պարբերաբար անցկացվել են քաղաքացիական պաշտպանության ուսումնավարժություններ: Սակայն բնակավայրը չունի արտակարգ իրավիճակների չափանիշներին համապատասխան համայնքային կառավարման կենտրոն: Անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում այն հնարավոր կլինի տեղակայել դպրոցի նկողային հարկում, որը համապատասխան սարքավորումներով և գույքով ապահովելու անհրաժեշտություն կունենա: Հատկապես անհանգստացնող է համայնքի միջնակարգ դպրոցի, նախադպրոցական ուսումնական հաստատության և բնակիչների սեփականությունը հանդիսացող առանձնատների նկուղները, որպես ապաստարաններ օգտատործելու առկա վիճակը: Հանրակրթական դպրոցի և նախադպրոցական ուսումնական հաստատության շենքերի նկուղային հարկերը գտնվում են քայքայված և

անբարեկարգ վիճակում, իսկ բնակիչների սեփականությունը հանդիսացող նկուղային հարկերը օգտագործվում են նրանց տնտեսական կարիքների համար:

Համայնքում արտակարգ իրավիճակների ոլորտում անհրաժեշտ է իրականացվել այնպիսի աշխատանքներ, որոնք նպատակաուղղված կլինեն արտակարգ դեպքերի կանխման, ծայրահեղ դեպքում դրանցից բխող վնասները նվազագույնի հասցնելու և վթարավերականգնողական աշխատանքները շուտափույթ կատարելու համար:

Դրա հնարավոր կլինի ինժեներական համապատասխան կառուցվածքների կառուցման, միջնակարգ դպրոցի և նախադպրոցական ուսումնական հաստատության շենքերի նկուղային հարկերի ամրացման-վերականգնման կամ նպատակային նշանակության գազապաստարանի կառուցման ծրագրերի իրականացմամբ:

Սակայն համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պայմաններում հնարավոր չէ աշխատանքներ իրականացնել առկա ապաստարանների հիմնանորոգման, շարքից դուրս եկած գույքի, սարքավորումների և պաշտպանիչ միջոցների արդիականացման, նյութատեխնիկական բազայի համալրման և այդ ոլորտում հրատապ լուծում պահանջող այլ խնդիրների լուծման գործում:

Համայնքում բնական աղետներից առավել վտանգ են ներկայացնում երկրաշարժերը, սելավները, գարնանային վարարումների հետևանքով առաջացող հեղեղումները, ձնաբուքը, կարկտահարությունները, ցրտահարությունները և ուժեղ քամիները, տևական երաշտը, օդի փոշուց բարձր աղտոտվածությունը:

Համայնքի հեղեղավտանգ տեղամասերի նկարագրությունը՝

թիվ թիվ 23 և 24 փողոցների բնակելի տներնը, օժանդակ կառույցներըն ու տնամերձ հողամասերը:

Համայնքում տեխնածին բնույթի աղետներից են երկրաշարժի հետևանքով վթարային վիճակում գտնվող շենքերի ու շինությունների հնարավոր փլուզումները, Գյումրի-Երևան մայրուղու երկայնքով մարդկանց, գյուղատնտեսական մեքենաների ու կենդանիների անցումների բացակայությունը, ավտովթաները, կենցաղային հրդեհները, գազի արտահոսքի հետևանքով հնարավոր պայթյունները:

Վերոնշյալ աղետների պատճառ են հանդիսանում հիմնականում բնակչության կողմից անվտանգության կանոնների չիմացությունը և ոչ ճիշտ կիրառությունը:

Տեխնածին աղետներից խուսափելու և այն նվազագույնի հասցնելու համար կարևորվում է տեղական հեռուստատեսության դերը՝ բնակչության շրջանում բացատրական աշխատանքների անցկացման, անվտանգության կանոնների իրազեկման հարցում:

Համայնքի տարածքում քիմիական վտանգավոր օբյեկտներ չկան:

ԲՆԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԱԾԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

Բնական և տեխնածին աղետների ժամանակ բնակչության պաշտպանվածության խնդիրը պետք է միշտ լինի բարձր մակարդակի վրա: Առաջին և ամենակարևոր պայմանը ռիսկերի նվազեցման գործընթացում հասարակության պատրաստվածությունն է բնական և տեխնածին աղետներին: Լավ տեղեկացված բնակչությունը մեծ պատասխանատվությամբ է արձագանքում անվտանգության աստիճանի բարձրացման նպատակով իրականացվող ամեն մի գործողության:

Ռիսկերի նվազեցման գործընթացում կարևորվում է աղետների վերաբերյալ տեղեկատվական, վերլուծական, ինչպես նաև ազդարարման, իրազեկման աշխատանքների կազմակերպման և իրագործման դերը:

Համայնքում արտակարգ իրավիճակների կանխարգելման, բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) Գյումրի-Երևան մայրուղու վրա գյուղատնտեսական տեխնիկայի և անասունների անցման համար ինժեներական համապատասխան կառուցվածքների (անցումների) կառուցում.

2)Սելավատարերի մաքրում, հունների ամրացում.

3)Համայնքում առկա վթարային շենքերի քանդում, ամրացում.

4)Ներհամայնքայի ճանապարհների նորոգում, նրանց վրա գտնվող կամուրջների և ջրահեռացման կառուցվածքների վերականգնում.

5)միջնակարգ դպրոցի և նախադպրոցական ուսումնական հաստատության շենքերի նկուղային հարկերի մաքրում և վերանորոգում.

6)Կոյուղու համակարգի կառուցում.

7)Հակակարկտային կայանների տեղադրում.

8)միջնակարգ դպրոցի և նախադպրոցական ուսումնական հաստատության շենքերի հրշեջ հիդրանտների վերականգնում.

9)Համայնքի աղբավայրի կառուցապատում.

10)Գայլերի հնարավոր հարձակումներից պաշտպանելու ուղղությամբ միջոցառումների իրականացում.

11)Համայնքում ստեղծել դիզելային վառելիքի պահուստ՝ արտակարգ իրավիճակների դեպքերի կանխարգելման և դրանց հետևանքների վերացման աշխատանքների կատարման համար:

12)Համայնքում ստեղծել առաջին անհրաժեշտության պարագաների պաշարներ արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած բնակչությանը առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովելու համար.

1)Համայնքի բնակչության ազդարարման համար էլ. շչակների ձեռքբերում և տեղադրում:

13)Քաղաքացիական պաշտպանության ուսումնավարժական միջոցառումների ու ուսոցողական սեմինար-պարապմունքների անցկացում:

14) ակտիվացնել համագործակցությունը <<Կառուցենք անվտանգ համայնքներ Հարավային Կովկասում>>ծրագրի շրջանակներում համայնքում ստեղծված համայնքային թիմի և <<Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ>> հիմնադրամի ու աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի հետ: »

3.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքում առկա հիմնախնդիրները լուծելու, ծառայություններ մատուցելու և ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայից և համայնքի սեփական եկամուտներից: Համայնքի սեփական եկամուտների աղբյուրներն են՝ հողի հարկը, գույքհարկը, վարձակալության տրված համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերի վարձավճարները, տեղական տուրքերն ու վճարները, ինչպես նաև համայնքի սեփականության գույքի օգտագործումից և օտարումից գոյացող միջոցները: Նախորդ 3 տարիներին համայնքի բյուջեի եկամուտները կատարվել են՝ 2013թ.՝ 100.3 %-ով, 2014թ. 101.1 %-ով, 2015թ.՝100.2 %-ով: Նշված ժամանակահատվածում բյուջեի մուտքերի հիմնական մասը նպատակաուղղվել է ընթացիկ աշխատավարձերի վճարմանը, նախադպրոցական հիմնարկի ֆինանսավորմանը, բնակավայրի գազաֆիկացման համար համապատասխան ներդրումների ապահովմանը, հրատապ լուծում պահանջող խնդիրների լուծմանը և առանձին ծառայությունների մատուցմանը:

Համայնքում որոշակի դժվարություններ կան հողի հարկի և գույքահարկի ապառքների հավաքագրման գործում: Համայնք բյուջեի ֆինանսական թույլ կարողությունների պայմաններում հնարավոր չէ լուծել համայնքում առկա հիմնախնդիրները: Այդ գործում անհրաժեշտ է պետության և հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

Սեփական եկամուտների սահմանափակ հնարավորությունների պայմաններում քառամյա ժամկետում համայնքի բյուջեի աճը ուղղակիորեն պայմանավորված կլինի պետության կողմից համահարթեցման սկզբունքով համայնքին տրամադրվող դոտացիայի աճից և նպատակային գումարների հատկացումից: Համայնքը պատրաստակամ է բաժնեմասային /համաֆինանսավորման/ կարգով մասնակցություն ունենալու հանրապետությունում գործող միջազգային ծրագրերի ու հիմնադրամների կողմից համայնքներում իրականացվող ներդրումային ծրագրերի իրականացմանը, որի համար համաֆինանսավորման աղբյուր կարող է հանդիսանալ համայնքի բյուջեի սեփական միջոցները, համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքների օտարումից

գոյացող միջոցները, ինչպես նաև համայնքի բնակչության կողմից կատարվող ներդրումները:

3.2. ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

հազ.դրամ

հ/հ	*Եկամուտի տեսակը*	*2013թ.*			*2014թ.*			2015թ.		
		Պլան	*կատ.*	*%*	*Պլան*	*կատ.*	*%*	*Պլան*	*կատ.*	*%*
	Եկամուտներ, ընդամենը	60633.0	60810.8	100.3	66764.8	67475.5	101.1	72986.8	73150.7	100.2
Ա	*Հարկային եկամուտներ*	10172.1	10096.9	99.3						
1	Հողի հարկ	4450.2	4489.0	100.9	4447.6	4348.8	97.8	4454.0	4483.1	100.7
2	Գույքահարկ	5721.9	5607.9	98.0	6391.0	7183.1	112.4	7684.9	7759.5	101.0
3	Այլ հարկային եկամուտներ				-	-				
Բ	*Տուրքեր*	100.0	120.0	120.0	120.0	110.0	91.7	110.0	80.0	72.7
1	Պետական տուրքեր	-	-	-	-	-				
2	Տեղական տուրքեր	100.0	120.0	120.0	120.0	110.0	91.7	110.0	80.0	72.7
Գ	*Ոչ հարկային եկամուտներ*	1995.8	2228.8	111.7						
1	Համայնքային սեփ.հող.վարձ/վճ	1945.8	2164.3	111.2	2245.3	2257.7	100.5	3256.8	3300.5	101.3
2	Գույքի վարձավճ.	50.0	64.5	129.0	-	-		-	-	-
3	Տեղական վճարներ	50.0	64.5	129.0	50.0	65.0	130	40.0	86.5	216.3
4	Այլ ոչ հարկային եկամուտներ	-	-	-	-	-		-	-	-
5	ՏԻՄ-ին պետ. կողմ. լիազ. իր. հ. մ.	-	-	-	-	-				
Դ	*Պաշտոնական տրանսֆերտներ*	48365.1	48365.1	100.0				57441.0	57441.1	100.0
1	Դոտացիա	46481.8	46481.8	100.0	53510.9	53510.9	100.0	57441.0	57441.1	100.0
2	Սուբվենցիա	1883.3	1883.3	100.0	28.2	28.2	100.	-	-	-

Ե	*Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարված հատկացումների մուտքեր*	-	-	-	-	-	0			

3.3 ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ հազ. դրամ

	ծախսի տեսակը	*2013թ.*			*2014թ.*			2015թ.		
		Պլան	*կատ.*	*%*	*Պլան*	*կատ.*	*%*	*պլան*	*կատ.*	*%*
1	**Ընդամենը ծախսեր**	66684.7	63919.1	95.8	70422.0	65496.2	93.0	82921.3	83119.3	100.2
1	Աշխատավարձ և դրան հավասարեցված վճ.	13051.2	13017.3	99.7	16878.2	15882.9	94.1	20870.0	20593.1	98.7
2,	Պարգևատրում	2700.0	2699.4	99.9	-	-	-			
3,	Սոց,ապահովագրական վճար	-	-	-	-	-	-			
4,	Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	18166.6	17005.1	93.6	18496.9	16107.1	87.7	20482.0	19570.0	95.5
5,	Շարունակական ծախսեր, որից	4505.0	4365.7	96.9	5728.0	5523.8	96.4	6243.0	6094.4	97.6
5.1	գործառնական և բանկային ծառայություն	-	-	-	-	-	-	70.0	36.0	51.4
5.2	Էներգետիկ ծառայությ.	2827.0	2827.0	100.0	3650	3650	100.0	5495.0	5495.0	100.0
5,3	Կոմունալ ծառայություն	1000.0	994.0	99.4	1400	1354	96.7	-	-	-
5,4	Կապի ծառայություն	600.0	472.0	78.7	600	448.7	74.8	500.0	395.4	79.1
5,5	Ապահովագրական ծախսեր	78.0	72.7	93.2	78.0	71.1	91.1	78.0	68.0	87.2

5.6	գույքի և սարքավորումների վարձակալություն	-	-	-	-	-	-	100.0	100.0	100.0
6,	Գործուղումներ և շրջագայ. Ծախսեր	344.0	332.0	96.5	450.0	156.0	34.6	300.0	124.0	41.3
7.	Պայմանագրային այլ ծառայ. Ձեռք բերում,որից	1084.6	717.0	66.1	554.0	341.4	61.6	529.0	486.9	92.0
7.1	Համակարգչային ծառայ	259.0	205.0	79.1	264.0	263.2	99.7	314.0	321.2	102.3
7,2	Տեղեկատվական ծառայ	285.6	172.0	60.2	90.0	78.2	86.8	160.0	119.7	74.8
7,3	Ընդհ. բնույթի այլ ծառայ	540.0	340.0	63.0	200.0	-	-	55.0	55.0	100
8,	Այլ մասնագիտ. Ծառայ. Ձեռք բերում	280.0	255.0	91.1	450.0	374.5	83.2	860.0	583.5	67.8
9,	Ընթացիկ նորոգում և պահպանում	7453.0	7445.5	99.9	6814.9	6309.1	92.6	8630.0	8593.8	99.6
10.	Նյութեր, որից	4500.0	3890.0	86.4	4500.0	3402.2	75.6	3920.0	3687.4	94.1
10,1	Գրասենյակային նյութեր	300.0	150.0	50.0	300.0	150.0	50	270.0	270.0	100
10,2	Տրանսպորտային նյութեր	1900.0	1900.0	100.0	1900.0	1824.8	96.0	1900.0	1900.0	100.0
10,3	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	-			-	-	-	-	-	-
10,4	Հատուկ նպատակային այլ նյութեր	2300.0	1840.0	80.0	2300.0	1427.4	62.0	1750.0	1517.4	86.7
11,	Սուբսիդիաներ ՊՈԱԿ կամ ՀՈԱԿ-ներին	8176.6	7639.0	93.4	10300.0	9390.0	91.2	15300.0	15020.0	98.2
12,	Դրամաշնորհներ	2350.0	2160.0	91.9	4762.0	4762.0	100	4800.0	4765.0	99.3
12,1	Ընթացիկ դրամաշն.	1300.0	1110.0	85.4	1110.0	1110.0	100	3800.0	3800.0	100.0
12,2	Կապիտալ դրամաշն.	1050.0	1050.0	100.0	3652.0	3652.0	100	-	-	-
12.3	այլ ընթացիկ դրամաշնորհներ	-	-	-	-	-	-	1000.0	965.0	96.5
13,	Սոցիալական նպաստներ և կենսաթոշ. , որից	6300.0	5730.0	90.95	5100.0	5060.0	99.2	6820.0	6650.0	97.5
13,1	Այլ նպաստներ բյուջեից	6300.0	5730.0	90.95	5100.0	5060.0	99.2	6820.0	6650.0	97.5
14,	Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակկերպ.	115.0	34.2	29.7	35.0	34.2	97.7	-	-	-
15,	Պարտադիր վճարներ	200.0	24.0	12.0	184.0	26.0	14.1	114.0	57.0	50
16,	Այլ ծախսեր	-	-	-	-	-	-			
17,	Պահուստային միջոցներ	-	-	-	10.0	-	-	0.8	-	-
18,	Ոչ ֆինանս. Ակտիվների գծով ծախսեր, որից՝	15625.3	15610.0	99.9	14655.0	14565.6	99.4	14732.5	14656.1	99.5

18,1	Շենքերի և շին-ի կառ.	1300.0	1300.0	100.0	-	-	-	-	-	-
18,2	Շենքերի և շին-ի կապիտալ նորոգում	13155.3	13140.0	99.9	13600.0	13510.6	99.3	14332.5	14256.1	99.5
18,3	Վարչական սարքավոր.	550.0	550.0	100.0	275.0	275.0	100	-	-	-
18,4	Նախագծահետազոտ. ծախսեր	620.0	620.0	100.0	780.0	780.0	100	400.0	400.0	100.0
19,	ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	-50.0	-757.1	-151.4	-	-131.6	-	198.0	1935.0	-

3.4.ՀՆԳԱՄՅԱ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

հազ.դրամ

h/h	Եկամուտի տեսակը	2015թ. նախատես-ված	2016թ. նախա-տեսված.	2017թ. կանխա-տեսում.	2018թ. կանխա-տեսում.	2019թ. կանխա-տեսում.	2020թ. կան խա-տես ում.	2021թ. կան խա-տես ում.
	Եկամուտներ՝ընդհամենը	71426,3	**73671.7**	7729,7	80525,6	84551.8	88780.0	93219.0
Ա	*Հարկային եկամուտներ*							
1	Հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար	4449,0	4457.8	4449,0	4449,0	4449.0	4449.0	4449.0
2	Համայնքի բյուջե մուտքագրվող գույքահարկ	7137,1	7823.6	7162,4	7180,7	7190.8	7200.5	7220.05
4	Այլ հարկային եկամուտներ							
Բ	*Տուրքեր*	*110,0*	*90.0*	*110,0*	*110,0*	*110.0*	*110.0*	*110.0*
1	Պետական տուրքեր							
2	Տեղական տուրքեր							
Գ	*Ոչ հարկային եկամուտներ*							
1	Գույքի վարձակալությունից համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճար	2245,3	3360.2	2245,3	2245,3	2245.3	2245.3	2245.3
2	Գույքի վարձավճարներ							

3	Տեղական վճարներ	40,0	40.0	40,0	40,0	40.0	40.0	40.0
4	Այլ ոչ հարկային եկամուտներ							
5	ՏԻՄ-երին՝ պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման համար							
Դ	*Պաշտոնական տրանսֆերտներ*							
1	Դոտացիա	57444,9	57900.1	63333,0	66500,6	69825.63	73316.92	76982.77
2	Սուբվենցիա							
Ե	*Եկամուտներ, կապիտալի գործառնություններից*							
Զ	*Տարեսկզբի ազատ մնացորդ*							
Է	*Ֆոնդային բյուջե*							
6	Բյուջեի կատարման կանխատեսում /տոկոս/	101	100	105	105	105	105	105

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Աղյուսակ 2. Համայնքի 2014-2015թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2014թ. փաստ.	2015թ. փաստ.	2016թ. նախ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	5	6	7	8	9	10	11	12
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*								
I.	**ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)***	**67475,5**	73150.7	**73671.7**	**77297,7**	**80525,6**	84551.8	88780.0	93219.0
1.	**ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ**								
1.1	**Գույքային հարկեր անշարժ գույքից**								
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար								
	Հողի հարկ	4348,8	4483.1	4457,8	4449,0	4449,0	4449,0	4449,0	4449,0
1.2	**Գույքային հարկեր այլ գույքից**								
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	**7183,1**	**7759.5**	**7822.6**	**7162,4**	**7180,7**	7190.8	7200.5	7220.05
1.3	**Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ**								
	Տեղական տուրքեր	110,0	110,0	90,0	110,0	110,0	110.0	110.0	110.0

1.4	**Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ**								
	Պետական տուրքեր								
1.5	**Այլ հարկային եկամուտներ**								
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ								
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ								
2.	**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ**								
2.1	**Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ**								
2.2	**Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ**								
2.3	**Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ**								
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	53510,9	57441.1	57900,1	63333,0	65500,6	69825.63	7331 6.92	76982.77
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ								
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	28,2							
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով								
	ստացվող պաշտոնական դրամաշնորհներ								
2.4	**Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ**								
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)								
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ								
3.	**ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ***								
3.1	**Տոկոսներ**								
3.2	**Շահաբաժիններ**								
3.3	**Գույքի վարձակալությունից եկամուտներ**								
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	2257,7	3300.5	3360.2	2245,3	2245,3	2245,3	2245,3	2245,3
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության								

	վարձավճարներ								
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ								
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր								
3.4	**Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից,** այդ թվում								
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ								
3.5	**Վարչական գանձումներ**								
	Տեղական վճարներ	65,0	86.5	40,0	40,0	40,0	40.0	40.0	40.0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ								
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ								
3.6	**Մուտքեր տույժերից, տուգանքներից**								
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ								
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից								
3.7	**Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ**								
3.8	**Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ**								
3.9	**Այլ եկամուտներ***								
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր								
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր								
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ								
II.	**ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)**								
1.	**Հիմնական միջոցների իրացումից մուտքեր**								

	Անշարժ գույքի իրացումից մուտքեր								
	Շարժական գույքի իրացումից մուտքեր								
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր								
2.	**Պաշարների իրացումից մուտքեր**								
3.	**Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր**								
4.	**Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր**								
	Հողի իրացումից մուտքեր								
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր								
III.	**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)**								
Ա.	**ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)**								
1.	**ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ**								
1.1	**Արժեթղթեր**								
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր								
	-հիմնական գումարի մարում								
1.2	**Վարկեր**								
	-վարկերի ստացում								
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում								
1.3	**Փոխատվություններ**								
	-բյուջետային փոխատվությունների ստացում								
	-ստացված փոխատվությունների գումարի մարում								
2.	**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ**								
2.1	**Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն**								
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր								
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր								
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում								
2.2	**Փոխատվություններ**								
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր								
	-փոխատվությունների տրամադրում								
2.3	**Համայնքի բյուջեի միջոցների**								

	տարեսկզբի ազատ մնացորդը								
2.4	**Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս**								
2.5	**Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս**								
2.6	**Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում**								
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը								
Բ.	**ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ**								
1.	**ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ**								
1.1	**Արժեթղթեր**								
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր								
	-հիմնական գումարի մարում								
1.2	**Վարկեր**								
	-վարկերի ստացում								
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում								
1.3	**Փոխատվություններ**								
	-փոխատվությունների ստացում								
	-ստացված փոխատվությունների գումարի մարում								

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մե

5. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

N	Ծրագրի անվանումը	Իրականացնող կազմակերպությունը	Ծրագրի ընդհանուր բյուջեն	որից		Իրականացման տարեթիվը
				Դոնոր կազմակերպությունը	Համայնքի ներդրում	
1	Ճանապարհաշի նություն	Պետական բյուջե	203 292800	200000000	3292800	2006-2008
2	Մշակույթի տան վերանորոգում	Պետական բյուջե	60000000	60000000	-	2009-2011
3	Բնակավայրի գազաֆիկացում	«Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման» ծրագիր	85739517	77165565	8573952	2008-2009
		«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ծրագիր	153034384	137730928	15303436	2009-2010
		«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ծրագիր	128972000	ՀՀ Շիրակի մարզպետարան -2300000	1500000	2015-2016
		համայնքային բյուջե	5744916	-	5777916	2016
4.	նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի ջեռուցման համակարգի կառուցում	ՅՈՒՆԻՍԵՖ	8070000	5530000	2540000	2015

6.ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-ի կողմից ընտրված ռազմավարությունից և առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ16)՝ ընդգրկելու համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում: Այդ ծրագրերի մի մասի իրականացումը համարվում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություն, իսկ մյուս մասը դուրս է վերջիններիս լիազորությունների շրջանակից, սակայն դրանց իրականացումը խիստ կարևոր նշանակություն ունի բնակչության բարեկեցությունը և համայնքի համալիր ու առաջանցիկ զարգացուը ապահովելու համար:

Աղյուսակ 1.Պարտադիր իրականացվող ծրագրերի ցանկ

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Ծրագրի անվանումը
		ՏԻՄ-երի լիազորություններ
1	Սառնաղբյուրի համայնքապետարան	Կառավարման ապարատի պահպանում
2	Սառնաղբյուրի համայնքապետարան	Համայնքի ՆՈՒՀ -ի պահպանում
4	Սառնաղբյուրի համայնքապետարան	Բնակչությանը սոցիալական օգնության տրամադրում
5	համայնքապետարան	Աղբահավաքման աշխատանքների իրականացում (բոլոր բնակավայրերում և համայնքի ընդհանուր վարչական տարածքում)
6	համայնքապետարան	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում

Աղյուսակ 2.**առաջարկվող ծրագրերի ցանկ**

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
1	***խմելու ջրի ներքին ցանցի կառուցում/ծրագիրը ընթացքի մեջ է/***	735000.0
2	Դաշտամիջյան և ներհամայնքային ճանապարհների նորոգում	4500.0
3	Համայնքի հեղեղատարների մաքրում	5500.0
4	ՆՈՒՀ-ի գույքի համալրում	2000.0
5	Մարզահրապարակի կառուցում	7000.0
6	ՆՈՒՀ-ի կից տարածքի խաղահրապարակի ստեղծում, կարուսելների համալրում և բարեկարգում	2000.0
7	Գյուղի կենտրոնական մասում գտնվող տարածքում պուրակի ստեղծում, Նստարանների տեղադրում	1200.0
8	***Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակում***	6000.0
9	***Նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի վերանորոգում***	20000.0
10	Մշակույթի տան շենքի վերանորոգում	120000.0
	ընդամենը	903200.0

Ծրագրերի առաջնահերթությունների որոշում

Ըստ բնակավայրի ծրագրերի ցանկը սահմանելուց հետո դրանք գնահատվել են ըստ առաջնահերթության՝ հիմք ընդունելով հետևյալ չափորոշիչները.

- ✓ Շահառուների թիվ
- ✓ Համայնքի կարողությունների հզորացում
- ✓ Իրատեսականություն
- ✓ Հրատապություն

Ըստ սահմանված չափորոշիչների ծրագրերը գնահատվել են առավելագույնը 10 բալանոց սանդղակով: Գնահատականները ներկայացված են աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 1. 1 Պարտադիր իրականացվող ծրագրեր

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)	Գնահատման չափանիշներ (0-10 բալ)				Ընդամենը (բալ)	Ծրագրի առաջնահերթությունը
			Շահառուների թիվ	Համայնքի կարողությունների հզորացում	Իրատեսականություն	Հրատապություն		
1	Կառավարման ապարատի պահպանում		X	X	X	X	X	**1**
2	Համայնքի ՆՈՒՀ -ի պահպանում		X	X	X	X	X	**2**
3	Բնակչությանը սոցիալական օգնության տրամադրում		X	X	X	X	X	**3**
4	Աղբահավաքման աշխատանքների իրականացում (բոլոր բնակավայրերում և համայնքի ընդհանուր վարչական տարածքում)		X	X	X	X	X	**4**
5	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում		X	X	X	X	X	**5**

աղյուսակ 2.1 Առաջարկվող ծրագրերի առաջնահերթության որոշում

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)	Գնահատման չափանիշներ (0-10 բալ)				Ընդամենը (բալ)	Ծրագրի առաջնահերթությունը
			Շահառուների թիվ	Համայնքի կարողությունների հզորացում	Իրատեսականություն	Հրատապություն		
1	Խմելու ջրի ներքին ցանցի կառուցում	735000.0	9	9	10	10	38	**1**
2	Դաշտամիջյան և ներհամայնքային ճանապարհների նորոգում	4500.0	10	8	9	10	37	**2**
	Համայնքի հեղեղատարների մաքրում	5500.0	10	8	9	9	36	**3**
3	ՆՈՒՀ-ի գույքի համալրում	2000.0	10	5	7	6	28	**6**
4	Մարզահրապարակի կառուցում	7000.0	10	4	5	6	25	**7**
5	ՆՈՒՀ-ի կից տարածքի խաղահրապարակի ստեղծում, կարուսելների համալրում և բարեկարգում	2000.0	9	3	3	8	23	**9**
6	Գյուղի կենտրոնական մասում գտնվող տարածքում պուրակի ստեղծում, Նստարանների տեղադրում	1200.0	10	2	3	7	22	**10**
7	***Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակում***	6000.0	10	3	3	8	24	**8**
8	***Նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի վերանորոգում***	20000.0	10	8	6	8	32	**4**
9	Մշակույթի տան շենքի վերանորոգում	120000.0	10	7	5	7	29	**5**

Պարտադիր իրականացվող ծրագրերն ըստ առաջնահերթության չեն գնահատվել: Դրանք ի սկզբանե դիտարկվել են որպես առաջնահերթ և պարտադիր կատարման ենթակա: Այս մոտեցումը ցուցաբերվել է ելնելով այն տրամաբանությունից, որ անկախ որևէ ծրագրի իրականացման կարևորությունից, համայնքում պետք է գործի աշխատակազմ և հետևաբար պետք է նախատեսված լինեն վերջինիս պահպանության հետ կապված ծախսեր: Բացի այդ, գործում է նաև համայնքային ենթակայության ՆՈՒՀ-ը, և վերջինիս պահպանության հետ կապված ծրագրերը նույնպես դիտարկվել են որպես առաջնահերթ:

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքի խմելու ջրի ներքին ցանցի կառուցում

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի խմելու ջուրը մատակարարվում է Արագած լեռան բնական աղբյուրներից ինքնահոս եղանակով, 4 լիտր/ վրկ. հզորությամբ: Բնակչության խմելու ջրով ապահովվածությունընկազմումէ40ոկոս:Բնակավայրի ջրամատակարարումը իրականացվումէ մոտ 20կմ երկարության ներտնտեսային ցանցի միջոցով, որը գտնվում է քայքայված վիճակում:Բնակավայրի ծայրամասային բնակելի տները և նորակառույց թաղամասը ապահովված չեն խմելու ջրով:

Համայնքի ներկայիս շահագործվող ներտնտեսային ցանցը կառուցվել է 1950-1960թթ., և ցանցի առանձին հատվածների քայքայվածության պատճառով հաճախակի են ջրագծի վթարները , ջրի կորուստները և աղտոտումները:

Ներկայումս խմելու ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքները սկսված են, սակայն ծրագրի ավարտը նախատեսված է 2017 թվականին:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1. Ծրագրի նպատակն է բարելավել համայնքի բնակչության խմելու ջրի մատակարարումը, կանխել վթարները, ջրի կորուստները և հնարավոր աղտոտումները, *բնակավայրում ունենալ խմելու ջրի նոր համակարգ:*

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- ✓ Խողովակաշարերի ՕԿՋ-ի կառուցում
- ✓ Աշխատանքների տեխնիկական և հեղինակային վերահսկում

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կբարելավվի համայնքի բնակչության խմելու ջրի մատակարարումը, կկանխվեն ջրի կորուստները և հնարավոր աղտոտումները, համայնքի բնակիչները կապահովվեն խմելու ջրով:

ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել <<Հայջրմուղկոյուղի>>ՓԲԸ-ի կողմից:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 735 .0 մլն. դրամ, որի 5 տոկոսի չափով համաֆինանսավորումը կատարվում է համայնքի բյուջեի հաշվին :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Խմելու ջրի ներտնտեսային ցանցի նորոգման աշխատանքների ավարտը նախատեսել՝ 2017 թվականին:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Սառնաղբյուր համայնքի ղեկավար՝ Սևակ Մադաթյան

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 2

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուրի համայնքի դաշտամիջյան և ներհամայնքային ճանապարհների նորոգում

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Սառնաղբյուրի համայնքի դաշտամիջյան և միջհամայնքային ճանապարհնեեի առանձին տեղամասերը գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում, առանձին տեղամասեր անանցանելի են տրանսպորտային միջոցների համար:

Երևան, Գյումրի, Մարալիկ, Արթիկ և այլ բնակավայրեր համայնքից օրական կատարվում են շուրջ 100 ուղևորափոխադրումներ: Բնակավայրի կենտրոնական թիվ 1 փողոցի վրա, որտեղից կատարվում են ավտոբուսների և միկրոավտոբուսների կանոնավոր երթերը, քիչ են սպասարանները անձրևային և բնակլիմայական ոչ բարենպաստ եղանակների դեպքում ուղևորների պատսպարման համար:

Վերանորոգման աշխատանքների նկարագրությունը

1. Հանքակոպճի միջոցով փոսլցման և ավազե ծածկույթով հարթեցման են ենթակա դաշտամիջյան 9.5 կմ երկարություն ունեցող ճանապարհից շուրջ 1950 գծ.մ. երկարության տարբեր տեղամասերի հատվածներ՝ շուրջ 10000 քառ.մ. ընդհանուր մակերեսով:

5. Հանքակոպճի միջոցով փոսլցման և ավազե ծածկույթով հարթեցման են ենթակա համայնքի առավել քայքայված և անանցանելի ներհամայնքային 3.0 կմ. ընդհանուր երկարության ճանապարհահատվածները՝ 15000քառ.մ. ընդհանուր մակերեսով, այդ թվում՝

Փողոց թիվ 7 – 700գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 3500քառ.մ.

Փողոց թիվ 2 – 400գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2000քառ.մ.

Փողոց թիվ 3 – 500գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2500քառ.մ.

Փողոց թիվ 4 – 500գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2500քառ.մ.

Փողոց թիվ 5 – 400գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2000քառ.մ.

Փողոց թիվ 6 – 500գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2500քառ.մ.

Գյուղամիջյան ճանապարհների ջրահեռացումն ապահովելու համար ճամփեզրերին անհրաժեշտ է բացել 1500գծ.մ. ընդհանուր երկարության ջրահեռացման առվակներ՝ 50սմ լայնությամբ և 40սմ խորությամբ / ընդամենը՝ 300խ.մ/:

Անհրաժեշտ է իրականացնել վերանորոգվող ճանապարհների սանիտարական մաքրման, շինարարական և կենցաղային աղբի տեղափոխման աշխատանքներ: Սանիտարական մաքրման է ենթակա 50000քառ. մ. տարածք: Ըստ նախնական հաշվարկների անհրաժեշտ է մաքրել և տեղափոխել մոտ 2500 խ.մ. շինարարական և կենցաղայի աղբ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար ապահովել բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ:

Երթևեկելի դարձնել համայնքի քայքայված և անանցանելի փողոցները, գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար բեռնատարների և գյուղատնտեսական մեքենաների համար ապահովել անվտանգ երթևեկություն, կանխել վթարային իրավիճակները և բերքի կորուստները:

Անձրևային և ոչ բարենպաստ եղանակայիրն պայմաններում ուղևորների պատսպարման համար ապահովել հարմարավետ պայմաններ:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ծրագրի իրականացման աշխատանքները կազմակերպելու համար ստեղծել աշխատանքային խումբ:
- Ուսումնասիրել նորոգման ենթակա ներհամայնքային ճանապարհների տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները, կազմել թերությունների ակտ և նախագծա-նախահաշվային փաստաթղթեր :
- Ճանապարհների նորոգումը կատարել խճապատման, սալարկման և մանրահատիկ ավազե ծածկույթի իրականացման միջոցով:
- Ոսումնասիրել շուկան և պատվիրել հավաքովի կոնստուկցիայի թվով 3 սպասարանների պատրաստումը:
- Ճանապարհների նորոգման և սպասարանների տեղադրման աշխատանքներն իրականացնել «Գնումների մասին» ՀՀ օրեքով սահմանված կարգով, մրցութային կարգով շինարարի ընտրության միջոցով:
- Ճանապարհների շրջակայքերի սանիտարական մաքրման աշխատանքներին ներգրավել համայնքի բնակչությանը:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար կապահովվի բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ: Երթևեկելի կդառնան համայնքի դաշտամիջյան անանցանելի ճանապարհահատվածները:

ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծավալների նկարագրությունը

Հ/հ	*Դաշտամիջյան և ներհամայնքային ճանապարհներիի տեղամասերը*	*Տեխնիկական վիճակի նկարագրությունը*	*Անհրաժեշտ աշխատանքների նկարագրությունը և ծավալները*
1.	Դաշտամիջյան ճանապարհներ	Դաշտամիջյան 9 կմ երկարություն ունեցող ճանապարհի շուրջ 1950գծ.մ. երկարության 10000քառ.մ. ընդհանուր մակերեսով տարբեր տեղամասերը գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում: Առանձին հատվածներ մարդատար ավտոմեքենաների համար դարձել են անանցանելի	Հանքակոպճի միջոցով անհրաժեշտ է իրականացնել 10000ք.մ. տարածքի փոսլցման աշխատանքներ, որի համար կպահանջվի մոտ 2000խ.մ. հանքակոպիճ,

2.	Սառնաղբյուր համայնքի ներհամայնքային ճանապարհներ	Ներհամայնքային ճանապարհները գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում: Առավել քայքայված և անանցանելի են ներհամայնքային 3կմ. ընդհանուր երկարության ճանապարհահատվածները՝ 15000քառ.մ. ընդհանուր մակերեսով, առանձին տեղամասեր անանցանելի են տրանսպորտային միջոցների համար:	Հանքակոպճի միջոցով անհրաժեշտ է իրականացնել 15000ք.մ. տարածքի փոսլցման աշխատանքներ, որի համար կպահանջվի 4500խ.մ. հանքակոպիճ, Փողոց թիվ 7 – 700գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 3500քառ.մ. Փողոց թիվ 2 – 400գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2000քառ.մ. Փողոց թիվ 3 – 500գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2500քառ.մ. Փողոց թիվ 4 – 500գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2500քառ.մ. Փողոց թիվ 5 – 400գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2000քառ.մ. Փողոց թիվ 6 – 500գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2500քառ.մ.
		Ճանապարհների շրջայկայքերում առկա են կենցաղային և շինարարական աղբի մեծ կուտակումներ: Ջրաբերուկներով և կենցաղային աղբով լցված են ջրահեռացման առվակները:	Անհրաժեշտ է մաքրել փողոցների եզրային 1500գծ. մ. ընդհանուր երկարության ջրահեռացման առվակները և փողոցների շրջակայքերի կենցաղային և շինարարական աղբակույտերը:

Սառնաղբյուրի համայնքի դաշտամիջյան և ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգման աշխատանքների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցների գնահատում

- Ծրագրի իրականացման համար կպահանջվի 4.5մլն. դրամի ներդրում,
- Ծրագիրն իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:
- Ծրագրով նախատեսված օժանդակ աշխատանքների կատարումը իրականացնել համայնքի բնակչության ուժերով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 2017-2019թվականներիի ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Սառնաղբյուրի համայնքի ղեկավար՝ Սևակ Մադաթյան:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 3

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուրի համայնքի հեղեղատարների մաքրում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքը շուրջ 2,5 կմ երկարության հեղեղատարները լցված են ջրաբերուկներով և կենցաղային աղբով: Լիարժեք ջրահեռացում չապահովվելու պատճառով հեղեղումների են ենթարկվում համայնքի առանձին թաղամասերի բնակելի տները, օժանդակ կառույցներն ու տնամերձ բանջարանոցները:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է մաքրել համայնքի 2.5 կմ ընդհանուր երկարության հեղեղատարները, առանձին հատվածներում կատարել հուների ու պատերի ամրացումներ, կանխել բնակելի տների, օժանդակ կառույցների ու տնամերձ բանջարանոցների հեղեղումները, ապահովել Սառնաղբյուր ջրամբարի ջրի մաքրությունը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Կազմավորել ծրագրի իրականացման աշխատանքային խումբ:
- Ուսումնասիրել հեղեղատարների մաքրման և հուների ամրացման աշխատանքների ծավալները, կազմել թերությունների ակտ և ծրագրային փաստաթղթեր:
- Ծրագրի իրականացման համար պահանջվող գումարը ապահովել համայնքի բյուջեի հաշվին:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայքում կապահովվի նորմալ ջրահեռացում, կկանխվի բնակելի տների, օժանդակ կառույցների ու տնամերձ բանջարանոցների հեղեղումները:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագրի իրականացման համար կպահանջվի մոտ 4.0 մլն. դրամ

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը իրականացնել 2017թ. -2020թ.

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Սառնաղբյուր համայնքի ղեկավար՝ Սևակ Մադաթյան
Ծրագրի աջակիցներ՝ համայնքի անդամներ

ԾՐԱԳՐԻՐ ԹԻՎ4

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐԳՈՒՄ

Ընդհանուր տեղեկություններ համայնքի մասին

ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքը բնակչության թվով մարզի 3-րդ խոշոր գյուղական համայնքն է: Համայնքում հաշվառված է 1035 ընտանիք՝ 3401 բնակչությամբ: Բնակավայրը գտնվում է ծովի մակարդակից 1980մ բարձրության վրա և ընդգրկված է հանրապետության լեռնային բնակավայրերի ցանկում: Բնակավայրին առանձնահատուկ են ձյունառատ, ցրտաշունչ, երկարատև ձմեռներն ու զով ամառային եղանակները: Համայնքն ապահովված է շուշօրյա ջրամատակարարմամբ և գազաֆիկացված է:

Տեղեկություն նախակրթարանի մասին

Համայնքի սեփականություն համարվող նախակրթարանի շենքը կառուցվել է 1982 թվականին և ունի 3 մասնաշենքեր, որոնցից նախակրթարանի կարիքների համար օգտագործվում է 2-ը: Նախակրթարանի նախագծային հզորություն կազմում է 140 երեխա/տեղ: Այն 2006 թվականին վերանորոգվել է ԱՄՆ ՄԶԳ ֆինանսական աջակցությամբ և համայնքի կողմից կատարված ներդրումների միջոցներով՝ «Փրկեք երեխաներին» կազամակերպության կողմից: Սակայն երրորդ մասնաշենքը ամբողջովին և մյուս մասնաշենքերը ունեն վերանորոգման կարիք :

Համայնքի բյուջեի միջոցներով ինչ-որ չափով նորացվել են նախակրթարանի գույքն ու հանդերձանքը: Նախակրթարանը ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ և կոյուղու ցանցով:

Նախակրթարանում ներկայումս գործում են 6 տարիքային խմբեր, որոնցում ընդգրկված են 3-6 տարեկան 120 երեխա: Նախակրթարանն ունի 15 կին աշխատողներ, որոնցից 6-ը բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ մանկավարժներ են:

2014 թվականին «Unicef» կազմակերպության ֆինանսական աջակցությամբ և համայնքի բյուջեից կատարված ներդրումներով նախակրթարանի շենքում անցկացվել է լոկալ ջեռուցման համակարգ, նպատակ ունենալով՝ ապահովել նախակրթարանի շուջտարյա գրաֆիկով աշխատանք, ընդլայնել համայնքի նախակրթարանի գործունեությունը՝ ավելացնելով նախակրթարան հաճախող երեխաների թիվը 40-ով /2 խմբով/:

Հիմնախնդրի նկարագրությունը

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսական աջակցությամբ 2006 թվականին նախակրթարանում իրականացված վերանորոգման աշխատանքների ժամանակ ֆինանսական ոչ բավարար

միջոցների պատճառով հնարավոր չի եղել ամբողջութամբ հիմնանորոգման ենթարկել նախակրթարանի շենքը: Երրորդ մասնաշենքը հնարավոր չէ օգտագործել քայքայվածության պատճառով:Պատերի ներքին հարդարումը խոնավության պատճառով ամբողջովին թափվել է , հատակի մանրատախտակները քանդվել են, պատուհանների քայքայվածության պատճառով հնարավոր չէ ապահովել անհարաժեշտ ջերմաստիճան: Բացի այդ , այս մասնաշենքում չկա նաև ջեռուցման համակարգ

Նպատակը և խնդիրները:

- բարելավել համայնքում նախադպրոցական կրթության ու դաստիարակության ուսումնական ծրագրի իրականացման պայմանները՝ ապահովելով նախակրթարանի շուջտարյա գրաֆիկով աշխատանքը,
- թեթևացնել նախադպրոցական տարիքի երեխաներ ունեցող ծնողների, հատկապես մայրերի, տարեցների, աշխատող, գյուղատնտեսությամբ զբաղվող կանանց ծանրաբեռնվածությունը՝ կապված երեխաների խնամքի և դաստիարակության հետ,
- կանոնակարգել նախակրթարանի սաների հաճախումները՝ նրանց բացակայությունները հասցնելով նվազագույնի,
- ընդլայնել համայնքի նախակրթարանի գործունեությունը՝ ավելացնելով նախակրթարան հաճախող երեխաների թիվը 40-ով /2 խմբով/, նախակրթարանի աշխատատեղերի քանակը՝ 5-ով:

<u>Կատարվելիք աշխատանքների նկարագրությունը</u>

- Նախակրթարանի 2 մասնաշենքներում անհրաժեշտ է իրականացնել հարդարման աշխատանքներ , իսկ 3-րդ մասնաշենքը ամբողջությամբ ենթարկել հիմնանորոգմանան:
- Ամբողջովին հիմնանորոգման կարիք ունի նաև տանիքը և այն ամբողջովին անհրաժեշտ է փոխել :

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար պահանջվում է 20000.0 հազ. դրամի ներդրում, Սառնաղբյուրի համայնքապետարանն իր շահագրգռվածությունն ու պատրաստակամությունն է հայտնում՝ կատարելու ծրագրի ընդհանուր արժեքի 10%-ի չափով ներդրում՝ իսկ մնացած գումարը հայցում է բարեգործական կազմակերպությունից:

Ծրագրի ակնկալվող քանակական և որակական արդյունքները, ազդեցությունը շահառուների վրա

Ծրագրի իրականացման արդյունքում՝

- համայնքի նախակրթարանում կիրականացվի շուրջտարյա գործունեություն՝ ապահովելով ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված՝ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և դաստիարակության ուսումնական ծրագրի պահանջների լիարժեք կատարումը,
- կթեթևանա երեխաների խնամքի և դաստիարակության հետ կապված աշխատող, հողագործությամբ ու անասնապահությամբ զբաղվող թվով 140 կանանց տնտեսական ծանրաբեռնվածությունը,
- կավելանան նախակրթարան հաճախող երեխաների թիվը՝ 40-ով /2 խումբ/, նոր խմբերում աշխատող 2 դայակի և 2 դաստիարակի հաստիքները՝ աշխատանքով ապահովելով 4 գործազուրկ կանանց, որի արդյունքում կբարելավվեն այդ աշխատատեղերն զբաղեցնող անձանց ընտանիքների սոցիալական պայմանները,

- նախակրթարանում բավարար շենքային պայմանների ստեղծումը իր դրական ազդեցությունը կունենա նաև նախակրթարանի մասնաշենքների պահպանության և սաների հաճախումների ավելացման վրա:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը իրականացնել 2018թ. -2020թ.

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Սառնաղբյուր համայնքի ղեկավար՝ Սևակ Մադաթյան

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 5

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուրի համայնքի մշակույթի տան հիմնանորոգում

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրի հիմնավորումը

Սառնաղբյուր համայնքի մշակույթի տունը ամբողջովին քայքայված և քանդված վիճակում է : Պետական բյուջեի միջոցներով տարիներ առաջ վերանորոգվել է մշակույթի տան տանիքը , փոխվել են դռներն ու պատուհանները: Սակայն շենքը հնարավոր չէ օգտագործել որպես մշակութային օջախ, քանի որ չկան վերանորոգված սենյակներ,դահլիճը , միջանցքն ու մյուս հատվածները հնարավորչէ օգտագործել: Այդ պատճառով հնարավոր չէ բնակավայրում երեխաների և երիտասարդների համար կազմակերպել որևէ միջոցառում, բացել որևէ մշակութային խմբակ: Երիտասարդները զրկված են իրենց ազատ ժամանակը հագեցած և հանգիստ միջավայրում անցակվնելու հանարավորությունից :

Ծրագրի նպատակները

1. Մշակութային խմբակների գործունեության և մշակույթի ոլորտում բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցման հնարավորությունների ստեղծում:

2.Ստեղծել նորմալ պայմաններ համայնքի բնակիչների, երիտասարդների համար իրենց ազատ ժամանակը հագեցած և բազմաբովանդակ անցկացնելու համար:

3.Պայմաններ ստեղծել տոնական, մարզական և այլ միջոցառումներ կազմակերպելու համար:

4.Ապահովել երեխաների համար տարբեր տեսակի խմբակների ստեղծումը:

Ծրագրի խնդիրները

- ✓ Նախապատրաստել մշակույթի տան շենքի վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- ✓ Հայտարարել մրցույթ, ընտրել կապալառուին
- ✓ Իրականացնել մշակույթի տան շենքի վերանորոգման աշխատանքները
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել մշակույթի տան շենքի վերանորոգման աշխատանքների կատարման ավարտական ակտը

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար պահանջվում է 120000.0հազ. դրամի ներդրում, Սառնաղբյուրի համայնքապետարանն իր շահագրգռվածությունն ու պատրաստակամությունն է հայտնում՝ կատարելու ծրագրի ընդհանուր արժեքի 10%-ի չափով ներդրում՝ իսկ մնացած գումարի ներդրում կատարելու հարցով դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին՝ պետական բյուջեից մարզին հատկացվող հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրում ընդգրկելու համար:

Ծրագրի ակնկալվող արդյունքները, ազդեցությունը շահառուների վրա

Ծրագրի իրականացման արդյունքում՝

- ✓ կստեղծվի երեխաների և երիտասարդների մշակութային կյանքը ակտիվացնելու հնարավորություն,
- ✓ տաղանդավոր երեխաների համար կստեղծվեն պայմաններ ՝ իրենց նախասիրած խմբակները հաճախելու և իրենց ունակությունները զարգացնելու համար:
- ✓ կակտիվանա համայնքի մշակութային կյանքը, հնարավորություններ կստեղծվեն համայնքի բնակիչների համար ՝ համերգներ կազմակերպելու, մշակութային միջոցառումներ կազմակերպելու , մարդկանց ազատ ժամանակը հագեցած դարձնելու համար:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը իրականացնել 2018թ. -2020թ

ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ

Համայնքի ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակազմ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Սառնաղբյուր համայնքի ղեկավար՝ Սևակ Մադաթյան:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 6

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուրի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատության գույքի համալրում

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Սառնաղբյուրի նախադպրոցական ուսումնական հաստատությունում եղած գույքը որոշակի նորացվել է, սակայն կարիք կա նոր գույքի և պարագաների ձեռք բերման:Նորացման կարիք ունի նաև խոհանոցը: Իսկ զգեստապահարանները, խաղասեղանները և նստարանները ունեն տասնամյակների պատմություն: Կարիք կա նաև նոր դիտակտիկ պարագաների :

Ծրագրերի նպատակները

1. Բարձրացնել նախադպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը:

2. ձեռք բերել համապատասխան գույք (խաղասեղաններ, զգեստապահարաններ, նստարաններ, աթոռներ, խոհանոցային պարագաներ, ապասք և այլն):

Ծրագրերի խնդիրները

- ✓ Նախապատրաստել ՆՈՒՀ-երի գույքի ձեռք բերման անհրաժեշտ փաստաթղթերը
- ✓ Իրականացնել ՆՈՒՀ-երի գույքի տեղափոխման և տեղադրման աշխատանքները

Ծրագրերի ակնկալվող արդյունքները

ՆՈՒՀ-ի գույքի համալրման և փոխարինման արդյունքում կունենանք նոր գույքով (խաղասեղաններ, զգեստապահարաններ, նստարաններ, աթոռներ, խոհանոցային պարագաներ, ապասք և այլն) համալրված և կահավորված ենթակառուցվածքներ:

Նոր գույքի և պարագաների առկայությունը կբարձրացնի նախադպրոցական կրթական որակը:

Կապը այլ ծրագրերի հետ

Այս ծրագրերն անմիջականորեն կապված են համայնքի ոլորտային ծրագրերի աղյուսակում նշված թիվ 3 ծրագրի հետ:

Ծրագրերի բյուջեն

ա/ ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները

ՆՈՒՀ-երի գույքի համալրման ծրագրերի իրականացման ծախսերը՝ ընդհանուրը 2000.0հազար դրամ, ֆինանսավորվելու են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը իրականացնել 2018թ. -2019թ

ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ

Համայնքի ավագանու անդամներ,

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Սառնաղբյուր համայնքի ղեկավար՝ Սևակ Մադաթյան:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 7

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուրի համայնքի մարզահրապարակի կառուցում

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքը բնակչության թվով մարզի 3-րդ համայնքը լինելով, չունի նորմալ մարզահրապարակ և ֆուտբոլի դաշտ:
Ներկայումս գործող ֆուտբոլի դաշտը երկար տարիներ չի վերանորոգվել , որի պատճառով առաջացել են փոսորակներ և ամբողջովին վերացել է խոտածածկը: Երիտասարդները և երեխաները հնարավորություն չունեն նորմալ պայմաններում զբաղվել սպրոտով , ֆուտբոլ խաղալ:

Ծրագրի նպատակները

1. *Ունենալ բարեկարգ ֆուտբոլի դաշտ և մարմնամարզական գործիքներով հագեցած գործող սպորտային ենթակառուցվածք:*
2. հարթեցնելու և համապատասխան խոտի սերմ ցանելու միջոցով բարեկարգել ֆուտբոլի դաշտը: Կից խաղահրապարակում նախատեսվում է տեղադրել և վերանորգել մարմնամարզական գործքները: Վերանորոգված ֆուտբոլի դաշտում կազմակերպել և անցկացնել միջբնակավայրային մրցաշարեր:

Ծրագրի խնդիրները

- ✓ Հաշվարկել ֆուտբոլի դաշտի և խաղահրապարակի համար անհրաժեշտ նյութերի քանակներն ու ծավալները
- ✓ Գնահարցման միջոցով ձեռք բերել համապատասխան նյութերը

Իրականացնել ֆուտբոլի դաշտի և խաղահրապարակի վերանորոգման աշխատանքները

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Ֆուտբոլի դաշտի և հարակից խաղահրապարակի վերանորոգման ծրագրի իրականացման արդյունքում կունենանք գործող սպորտային ենթակառուցվածք և երեխաների և երիտասարդների սպորտային կյանքն ակտիվացնելու հնարավորություն

ա/ ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները

ծրագրի իրականացման ծախսերը՝ ընդհանուրը 7000.0հազար դրամ, նախատեսվում է ֆինանսավորվել համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը իրականացնել 2018թ.

ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ

Համայնքի ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակազմ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Սառնաղբյուր համայնքի ղեկավար՝ Սևակ Մադաթյան

,Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 8
ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

<u>Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակում</u>

ԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին քաղաքաշինության բնագավառում վերապահված լիազորությունների իրականացման համար հրատապ անհրաժեշտություն է համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի՝ համայնքի գլխավոր հատակագծի և քաղաքաշինական գոտիավորման նախագծի պատվիրումը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի՝ համայնքի գլխավոր հատակագծի և քաղաքաշինական գոտիավորման նախագծի պատվիրման և այն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատելու միջոցով ապահովել համայնքում քաղաքաշինական գործունեություն իրականացումը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.Համայնքի քաղաքաշինական ծրագրային երկու փաստաթղթերի՝ համայնքի գլխավոր հատակագծի և քաղաքաշինական գոտիավորման նախագծի վերաբերյալ հարցը քննարկել իրավասու մարմինների հետ և հնարավոր լուծումներ գտնել ծրագրի իրականացման իրականացման հետ կապված խնդիրները լուծելու ուղղությամբ: Ընդունել ի գիտություն, որ Սառնաղբյուր համայնքի գլխավոր հատակագծի պատվիրումը նախատեսված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի սոցիալ տնտեսական զարգացման ծրագրում:

2. Ստեղծել ծրագրի իրականացման աշխատանքային խումբ, ճշտել աշխատանքների ծավալները, կազմել աշխատանքների իրականացման ժամանակացույց:

3. Կազմակերպել համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի՝ համայնքի գլխավոր հատակագծի և քաղաքաշինական գոտիավորման նախագծի հանրային լսումներ և քննարկումներ:

4. <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն պետության կողմից համայնքին, որպես սեփականություն փոխանցված հողերի իրացումից, ինչպես նաև հողերի նպատակային նշանակության (կատեգորիայի) փոփոխությունների հետևանքով առաջացած ֆինանսական միջոցներն ամբողջ ծավալով նպատակաուղղել համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակմանը:

5. Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի պատվիրման նպատակով համայնքի բյուջեում նախատեսել գումար:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագրի իրականացման համար ըստ նախնական հաշվարկների կպահանջվի շուրջ 6.0 մլն. դրամի ներդրում, որից 1.6 մլն. դրամը կապահովվի համայնքի բյուջեից, իսկ 4.4 մլն. դրամ ներդրում կատարելու հարցով դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին՝ պետական բյուջեից մարզին հատկացվող հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրում ընդգրկելու համար:

Պետության կողմից համայնքին, որպես սեփականություն փոխանցված հողերի իրացումից, ինչպես նաև հողերի նպատակային նշանակության (կատեգորիայի) փոփոխությունների հետևանքով առաջացած ֆինանսական միջոցները ամբողջությամբ նույնպես նպատակաուղղել համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակմանը:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի՝ համայնքի գլխավոր հատակագծի և քաղաքաշինական գոտիավորման նախագծի պատվիրման և այն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատելու միջոցով ապահովել համայնքում քաղաքաշինական գործունեություն իրականացումը:

Ծրագիրն իրականացնել մինչև 2018 թվականի հունվարի 1-ը:

ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ

Համայնքի ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակազմ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Սառնաղբյուր համայնքի ղեկավար՝ Սևակ Մադաթյան:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 9

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուրի համայնքի ՆՈՒՀ-ի կից տարածքի խաղահրապարակի ստեղծում, կարուսելների տեղադրում և բարեկարգում

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Սառնաղբյուրի նախադպրոցական ուսումնական հաստատության շրջակայքը կարիք ունի բարեկարգման և տեղադրված հին կարուսելները նորերով փոխարինման ու թարմացման: Ներկայիս անբարեկարգ վիճակը թույլ չի տալիս, որպեսզի ՆՈՒՀ-ի հաճախող երեխաները կարողանան բացօթյա դասաժամերին զբաղվեն կարուսելներով:

Ծրագրերի նպատակները

1. Բարձրացնել նախադպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը:

Նախատեսվում է բարեկարգել ՆՈՒՀ-ի բակը. իրականացնել հարթեցման աշխատանքներ, նորոգել ցանկապատերը, վերանորոգել եղած կարուսելները և ավելացնել նորերը:

Ծրագրերի խնդիրները

- ✓ Հաշվարկել ՆՈՒՀ-ի տարածքի բարեկարգման համար անհրաժեշտ նյութերի քանակներն ու ծավալները
- ✓ գնահարցման միջոցով ձեռք բերել համապատասխան նյութերն ու կարուսելները
- ✓ Իրականացնել ՆՈՒՀ-ի տարածքի բարեկարգման ու վերանորոգման աշխատանքները և տեղադրել ձեռք բերված նոր կարուսելները

Ծրագրերի ակնկալվող արդյունքները

Սառնաղբյուրի ՆՈՒՀ-ի շրջակայքում գտնվող տարածքի բարեկարգման և կարուսելների տեղադրման ծրագրերի իրագործման արդյունքում կունենանք բարեկարգված ենթակառուցվածքներ և մեր համայնքի փոքրիկների առօրյան առավել հետաքրքիր դարձնելու միջոցներ:

Կապը այլ ծրագրերի հետ

Այս ծրագրերը կապված են համայնքի ոլորտային ծրագրերի աղյուսակում նշված՝ թիվ 3 և թիվ 5 ծրագրերի հետ:

Ծրագրերի բյուջեն

ա/ ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները

ՆՈՒՀ-ի տարածքի բարեկարգման և կարուսելների համալրման ծրագրերի իրականացման ծախսերը՝ ընդհանուրը2000.0 հազար դրամ, ֆինանսավորվելու է համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը իրականացնել 2019թ.

ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ

Համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Սառնաղբյուր համայնքի ղեկավար՝ Սևակ Մադաթյան

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 10

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Գյուղի կենտրոնական մասում գտնվող տարածքում պուրակի ստեղծում, նստարանների տեղադրում

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի երիտասարդները չունեն հնարավորություն ազատ ժամերին և երեկոյան ինչ-որ վայրում հավաքվելու և իրենց ժամանցը կազմակերպելու: Եվ քանի որ համայնք այցելող զբոսաշրջիկները նույնպես շատ են, ուստի նրանք Սառնաղբյուրի եկեղեցի և այլ տեսարժան վայրեր այցելելուց զատ իրենց ժամանցը կազմակերպելու այլ հնարավորություններ չունեն:

Ծրագրի նպատակները

1. *Սառնաղբյուր համայնքը դարձնել ավելի բարեկարգ և հրապուրիչ համանքի բնակիչների և զբոսաշրջիկների համար՝ ապահովելով նրանց հանգստի կազմակերպման հաճելի պայմաններով:*

Նախատեսվում է Սառնաղբյուր համայքի հուշարձան-աղբյուրի տարածքում կառուցել պուրակ, տեղադրել նստարաններ, կանաչապատել տարածքը և ավելի խնամված տեսքի բերել :

Ծրագրի խնդիրները

- ✓ Հաշվարկել պուրակի կառուցման և նստարաններ տեղադրելու համար անհրաժեշտ նյութերը
- ✓ Գնահարցման կամ հայտարարության միջոցով ձեռք բերել համապատասխան նյութերը
- ✓ Իրականացնել պուրակի կառուցման աշխատանքները

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Սառնաղբյուր համայնքի հուշարձան-աղբյուրի տարածքը շատ գեղեցիկ պուրակի վերածելու , նստարաններ տեղադրելու դեպքում բարեկարգ տեսք կհաղորդվի բնակավայրին: Բնակավայրի երիտասարդներն ու երեխաները հնարավորություն կունենան մաքուր միջավայրում կազմակերպել իրենց հանդիպումներն ու ազատ ժամանցը: Բնակավայրը ավելի գրավիչ կդառնա այցելուների համար:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

Զբոսայգու կառուցման ծրագրի իրականացման ծախսերը՝ 1200.0 հազար դրամ, ֆինանսավորվելու են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը իրականացնել 2018-2019թվականներին

ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ

Համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Սառնաղբյուր համայնքի ղեկավար՝ Սևակ Մադաթյան

Աղյուսակ 5. Համայնքի ոլորտային ծրագրերի ամփոփագիր (առաջարկվող ծրագրերի ցանկըստ առաջնահերթության)

hh	ծրագրի անվանումը	չափի միավոր	արժեքը /հազ.դրամ/	ծրագրի կատարումը ըստ տարիների / հազ. դրամ/					ֆինանսավորման աղբյուրը		
				2017	2018	2019	2020	2021	համայնքային բյուջե	դոնոր կազմ.	պետ. բյուջե
1.	խմելու ջրի ներքին ցանցի կառուցում/ծրագիրը ընթացքի մեջ է/		735000.0	430000.0	-	-	-	-	36750.0	698250.0	-
2	Դաշտամիջյան և ներհամայնքային ճանապարհների նորոգում	**կմ**	**4500.0**	2500.0	1000.0	1000.0	-	-	4500.0	-	-
3	Համայնքի հեղեղատարների մաքրում	խմ	4000.0	500.0	500.0	500.0	500.0	-	4000.0	-	-
4	*Նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի վերանորոգում*	քմ	20000.0	-	8000.0	6000.0	6000.0	-	2000.0	18000.0	-
5	Մշակույթի տան շենքի վերանորոգում	քմ	120000.0	_	40000.0	40000.0	40000.0	-	12000.0	-	108000.0
6	ՆՈՒՀ-ի գույքի համալրում		2000.0	-	1000.0	1000.0	-	-	2000.0	_	_
7	Մարզահրապարակի կառուցում		7000.0	-	7000.0	-	-	-	7000.0	_	_
8	*Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակում*		6000.0	6000.0	-	-	-	-	1600.0	-	4400.0
9	ՆՈՒՀ-ի կից տարածքի խաղահրապարակի ստեղծում, կարուսելների համալրում և բարեկարգում	քմ	2000.0	-	-	2000.0	-	-	2000.0	_	_
10	Գյուղի կենտրոնական մասում գտնվող տարածքում պուրակի ստեղծում, նստարանների տեղադրում	քմ	1200.0	-	600.0	600.0	-	-	1200.0	-	-

ՀԶՀԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ) ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

ՀԶՀԾ-ի իրականացումը

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶՀԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶՀԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

ՀԶՀԾ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային կամ բնակավայրային ծրագրի ղեկավարն անձնական պատասխանատվություն է կրում ծրագրով նախատեսված աշխատանքների համակարգման, համապատասխան ծախսերի կատարման, արդյունքների ստացման, հաշվետվությունների պատրաստման և համայնքի ղեկավարին ներկայացման համար:

ՀԶՀԾ-ի մշտադիտարկումը (մոնիթորինգը)

ՀԶՀԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի և ԲԱԽ-երի կողմից կիսամյակը մեկ անգամ:

ՀԶՀԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային և բնակավայրային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Աղյուսակ 5-ում ներկայացված է ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

Աղյուսակ 5. ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը

Ոլորտ.					
Ծրագիր.					
Միջոցառում.					
Արդյունքային ցուցանիշները		2017 թ., 1-ին կիսամյակ / տարեկան			
տեսակը	անվանումը	պլան.	փաստ.	շեղում	մեկնաբանություն
Մուտքային					
Ելքային (քանակական)					
Ելքային (որակական)					
Ելքային (ժամկետայնության)					
Արդյունավետության					
Ծախսեր, հազար դրամ					

ՀԶՀԾ-ի ներքին մոնիթորինգի արդյունքները փաստաթղթի տեսքով ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն կներկայացնի համայնքի ղեկավարին,

վերջինս էլ օրենքով սահմանված կարգով այն կներկայացնի համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

ՀԶՀԾ-ի վերահսկումը

ՀԶՀԾ-ի վերահսկողությունը ապահովում է ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի ամբողջական իրականացումը, ռեսուրսների արդյունավետ օգտագործումն առաջադրված խնդիրները կատարելու, ակնկալվող արդյունքները ձեռք բերելու և սահմանված նպատակներին հասնելու համար, ծրագրերի պաշտպանվածությունը սխալներից ու ձախողումներից, ժամանակին ու ճշգրիտ տեղեկատվության ստացումը ՏԻՄ-երի ավելի հիմնավորված որոշումների կայացման համար: ՀԶՀԾ-ի վերահսկողությունը ենթադրում է՝

- ✓ ՀԶՀԾ-ի մշակման, քննարկման և իրականացման ընթացակարգերի հստակ պահպանում,
- ✓ ոլորտային ծրագրերով առաջադրված խնդիրների կատարման արդյունքների ստուգում,
- ✓ ոլորտային ծրագրերի պահանջներից շեղումների պարզաբանում և պատճառների բացահայտում,
- ✓ ՀԶՀԾ-ի ծրագրերի իրականացումից ստացված արդյունքների ամփոփում և համադրում ծրագրերի նպատակների, խնդիրների և նախատեսված արդյունքների հետ:

ՀԶՀԾ-ի վերահսկողության արդյունքները ներկայացվում են համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

ՀԶՀԾ-ի տարեկան և հնգամյա գնահատումը

ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան կամ հնգամյա գնահատումը կատարվում է՝ հիմնվելով ՀԶՀԾ-ի կիսամյակային մոնիթորինգների արդյունքների վրա:

ՀԶՔԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և նախատեսված աշխատանքների կատարման ցուցանիշների գնահատման ձևանմուշը ներկայացված է աղյուսակ 24-ում:

Համայնքի ղեկավարը կազմակերպում և անցկացնում է ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության աշխատանքային քննարկումներ, այնուհետև՝ համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում կազմակերպում և անցկացնում է ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագծի հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով տվյալ բնակավայրին վերաբերող ծրագրերի ու միջոցառումների իրականացման հարցերին:

Բոլոր բնակավայրերում անցկացված հանրային քննարկումների արդյունքներով, ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն լրամշակում է ՀԶՔԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագիծը, պատրաստում է դրանց վերաբերյալ ավագանուն տրամադրվող տեղեկատվությունը (ամփոփաթերթը և տեղեկանքը) և ներկայացնում համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության լրամշակված նախագիծը և դրան կից փաստաթղթերը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և որոշման կայացմանը:

ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագծի կազմման, քննարկման և որոշման կայացման վերաբերյալ ընթացակարգերը նույնությամբ

վերաբերում են նաև ՀԶՀԾ-ի իրականացման հնգամյա հաշվետվության նախագծի կազմմանը, քննարկմանը և որոշման կայացմանը:

ՀԶՀԾ-ի վերանայումը

Հիմնվելով ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶՀԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶՀԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶՀԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶՀԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Եզրափակում

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեի մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս:

Ելնելով սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից, շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը: 2017-2021թթ. համայնքային բյուջենեները պետք է մշակել որպես զարգացման, ծրագրային բյուջեներ, որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր ծրագրեր:

ՀԶՀԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶՀԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶՀԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

/

հավելված1

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի

h/h	անվանումը	չափի միա-վորը	քանակը	միավորի արժեքը /դրամ/	հաշվեկշռային ընդհանուր արժեքը /դրամ/	գույքի տեխնիկական վիճակի նկարագրությունը
1.	Գյուղապետարանի շենք	հատ	1	3250500	3250500	բավարար
2.	Անավարտ ջրագիծ	գծմ	6750	1970000	1970000	բավարար
3.	Վառելանյութի բաքեր	հատ	10	1400000	1400000	բավարար
4.	Դահլիճի նստարաններ	հատ	80	336000	336000	բավարար
5	Գյուղապետարանի և գերեզմանոցի պարիսպ	գծմ	240	2580000	2580000	բավարար
6	Ավտոմեքենա Գազ-3102-581	հատ	1	5495000	5495000	բավարար
7	Համակարգչային բլոկ	հատ	1	356800	356800	բավարար
8.	մոնիտոր	հատ	1	77800	77800	բավարար
9.	պրինտեր	հատ	1	46600	46600	բավարար
10.	Էլ.գեներատոր	հատ	1	74957	74957	լավ
11.	հեռախոս	հատ	2	32000	32000	բավարար
12.	գրասեղան	հատ	1	27850	27850	բավարար
13.	գրապահարան	հատ	1	29750	29750	բավարար
14.	ցուցատախտակ	հատ	1	3000	3000	բավարար
15.	ջրի պոմպ	հատ	1	35000	35000	լավ
16.	Համակարգիչ PC E4600	հատ	1	192305.08	192305.08	բավարար
17.	Մոնիտոր Bengq 17” LCD	հատ	1	69661.02	69661.02	բավարար
19	Էլ.գեներատոր Huter DY 3000L	հատ	1	170000	170000	լավ
20.	Ավտոմեքենա ՕՊԵԼ-ՕՄԵԳԱ	Հատ	1	1400000	1400000	բավարար
21	Խմելու ջրագծի ներքին ցանց	Գծմ	600	1494200	1494200	ենթակա է նորոգման
22.	Արտաքին լուսավորության ցանց	Գծմ	10460	15627523	15627523	լավ
23.	Ավտոկանգառ	Հատ	4	1656000	1656000	լավ
24.	Սաղավարտ ,,TOXO Sale”	հատ	3	123000	123000	լավ
25.	Սաղավարտ ,, Elios, Per ‘’	հատ	8	367600	367600	լավ
26.	Կարաբին ,,Alto Cari”	հատ	12	187200	187200	լավ
27.	Ձեռնոց <<ամուր կտորից>>	զույգ	20	15600	15600	լավ
28.	Ութնյակ ,,Hult Do2”	հատ	4	67000	67000	լավ
29.	Ութնյակ ,,928.01 ut”	հատ	1	15500	15500	լավ
30.	Պարան ,, Կոլումնա”	կապ	4	200000	200000	լավ
31.	Դիմակ ,,Acti Protect”	հատ	40	136800	136800	լավ
32.	Լոմ ,,երկաթե, 1.3մետր”	հատ	2	12800	12800	լավ
33.	Կացին ,,երկաթե 0.8մետր”	հատ	2	13200	13200	լավ
34.	Բահ ..սուր ծայրով”	հատ	5	15000	15000	լավ
35.	Բարձրախոս ,,ER66”	հատ	2	60000	60000	լավ

36.	Լապտեր	հատ	7	24500	24500	լավ
37.	Ժումառ	հատ	4	176800	176800	լավ
38.	Բաճկոն	հատ	20	378000	378000	լավ
38.	Տաբատ	հատ	20	302000	302000	լավ
40.	Ժիլետ /փրկարար/	հատ	20	228000	228000	լավ
41.	Շապիկ	հատ	20	70000	70000	լավ
42.	Ուսապարկ	հատ	20	180000	180000	լավ
43.	ԱՕ արկղ մեծ	հատ	2	126500	126500	լավ
44.	Ռոլիկ -Pro Traxion P51 Petzl	հատ	1	89400	89400	լավ
45.	Ռոլիկ FIXE P05SO Petzl	հատ	2	47600	47600	լավ
46.	Ռոլիկ բլոկ Tandem petzl	հատ	2	93400	93400	լավ
47.	Ապահովության համակարգ Corax C51	հատ	4	295600	295600	լավ
48.	Թվային լուսանկարչական ապարատPANASONIK FS 10	հատ	1	102000	102000	լավ
49.	Սեղան	Հատ	1	170000	170000	լավ
51.	Գրքապահարան	Հատ	1	130000	130000	լավ
52.	Գրքապահարան	Հատ	3	360000	360000	լավ
53.	Տակդիր	Հատ	1	50000	50000	լավ
55.	Ալեհավաք անտենա	Հատ	1	45000	45000	լավ
56.	Աթոռ	Հատ	10	240000	240000	լավ
57.	Գրասեղան	Հատ	3	195000	195000	լավ
58.	Գրասեղան	Հատ	2	120000	120000	լավ
59.	Համակարգիչ	Հատ	2	360000	360000	լավ
60.	Տպիչ սարք	Հատ	1	57000	57000	լավ
61.	Տպիչ սարք	Հատ	1	96000	96000	լավ
62.	Նկար	Հատ	2	44000	44000	լավ
63.	Նկար	Հատ	2	17000	17000	լավ
64.	Նկար	Հատ	1	4000	4000	լավ
65.	Շերտավարագույր	Հատ	12	291000	291000	լավ
66.	տաղավար	հատ	1	414000	414000	լավ
67.	դրոշակի կանգնակ	հատ	1	86000	86000	լավ
68.	սառնարան	հատ	1	100000	100000	լավ
69.	աղբարկղ	հատ	4	74000	74000	լավ
70.	սեղան ամսագրի համար/ապակյա/	հատ	1	81000	81000	լավ
71.	նոթբուկ TOSHIBA	հատ	1	240000	240000	լավ
72,	կաշվե բազկաթոռ	հատ	1	260000	260000	լավ
73.	ոռոգման փակ ցանց	գծմ	740	993000	993000	լավ
	Մշակույթի տուն և գրադարան					
1.	Մշակույթի տան շենք	հատ	1	10265000	10265000	հիմնանորոգման ենթակա
2.	Փայտյա գրապահարան	հատ	12	42000	42000	բավարար
3.	գրքեր	հատ	11301	750614.4	750614.4	բավարար
4.	աթոռներ	հատ	3	3600	3600	բավարար
5.	սեղան	հատ	1	1400	1400	բավարար
6.	Թերթերի պահարան	հատ	1	1000	1000	բավարար
7.	Մետաղյա պահարան	հատ	55	55000	55000	բավարար
	Նախադպրոցական հիմնարկ					
1.	Մանկապարտեզի շենք	հատ	1	7290552	7290552	տանիքը և երրորդ մասնաշենքը ենթակա են հիմնանորոգման

2.	*Յածրարժեք և արագամաշ գույք*			*2858151*	*2858151*	*բավարար*

Հավելված 2

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

N	Ցուցանիշը	Չափի միավոր	2016թ. փաստացի	2017 նախատ.	2018թ. կանխա-տեսում	2019թ. կանխա-տեսում	2020թ. կանխա-տեսում	2021թ. կանխա-տեսում
1	2	3	4	5	6	7	8	9
1	Համայնքի տարածքը	հա	4682.3	6491.31	6491.31	6491.31	6491.31	6491.31
2	Բնակչության թիվը	մարդ	3427	3460	3485	3500	3515	3530
3	Տն. տնտեսությունների թիվը	ընտ.	1025	1026	1030	1032	1035	1040
4	Ծնունդը		50	70	70	70	70	75
5	Մահացությունը	մարդ	23	22	23	22	22	21
6	Աշխատունակ բնակչություն.	մարդ	2	2247	2287	2292	2297	2300
7	Զբաղվածները ընդամենը այդ թվում ըստ տնտեսության ճյուղերի՝	մարդ	1220	1228	1269	1286	1298	1300
	ա/ գյուղատնտեսություն /թերի բեռնվածությամբ/	մարդ	1096	1100	1140	1150	1160	1165
	բ/արդյունաբերություն	մարդ	8	-	-	-	-	-
	գ/շինարարություն	մարդ	25	25	26	28	28	28
	բ/ ծառայությունների ոլորտ.	մարդ	86	85	85	88	90	90
	դ/այլ ոլորտներ	մարդ	5	18	18	20	20	25
8	Գործազրկության մակարդակը	%	61	54.6	55.4	54.6	54.6	54.2
9	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	10	10	10	11	12	12
10	Գյուղատնտեսական նշանակության հողեր	հա	3870.5	5663.65	5663.65	5663.65	5663.65	
	այդ թվում վարելահողեր	հա	1138	1006.1	1006.1	1006.1	1006.1	1006.1
11	Պահուստային հողերի օգտագործման մակարդակը	%	100	100	100	100	100	100
12	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկայությունը	կմ	20.0	20.0	20.0	20.0	20.0	20.0
13	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	40	40	40	40	40	40
14	Ոռոգման համակարգի	հա	80	80	80	80	80	80

	տակ ընկած հողեր							
15	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	35	35	35	35	35	35
16	Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	12	12	12	12	12	10
17	Ընդամենը բնակ -ֆոնդ այդ թվում՝	հատ բն./ք.մ	850/ 126500	850/ 126500	856/ 126900	858/ 127100	860/ 127300	863/127 660
	-Համայնքային	հատ ք.մ	-	-	-	-	-	-
	-Մասնավոր բնակ. ֆոնդ	հատ ք.մ	850/ 126500	850/ 126500	856/ 126900	858/ 127100	860/ 127300	863/127 660
18	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում	հատ	340	348	350	354	360	360
	Անօթևանի կարգավիճակ ունեցող	հատ	12	12	12	-	-	-
19	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լիտր/ օր	10	10	10	30	30	30
20	Ջրի կորուստները ցանցում	%	60	60.0	0.0	0.0	0.0	0
21	Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում	մարդ	440	399	399	420	445	450
22	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ	100	110	120	140	140	140
23	Համայնքապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը	մարդ	26	26	30	30	32	32